

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ




ՀՀ ՊԵԿ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	2
II. ՀՀ ՊԵԿ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	3
1. ՀՀ ՊԵԿ կողմից վերահսկվող հարկային եկամուտներ և պետական տուրք	3
2. ՀՀ բյուջեից փոխհատուցված (վերադարձված) գումարներ.....	4
3. Հարկ վճարողների հաշվառում.....	5
4. Արտաքին տնտեսական գործունեության ցուցանիշներ	6
5. Գործարքների փաստաթղթավորման ցուցանիշներ.....	7
6. Եկամուտ ապահովված աշխատատեղերի վերաբերյալ ցուցանիշներ.....	8
7. Հարկային հսկողության դրվագներ	9
8. Մաքսային հսկողության դրվագներ.....	11
9. Բողոքարկումներ և ստացված հարցադիմումներ	12
10. Հարկային և մաքսային վարչարարության դրվագներ	13
11. Ծառայողական քննություններ.....	14
12. Ուսումնական ծրագրեր.....	15
III ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ	16
1. Տնտեսական ակտիվություն.....	16
2. Հարկերի համադրություն տնտեսական ակտիվության հետ	17
IV. ՀՀ ՊԵԿ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ	18
ՀԱՎԵԼՎԱԾ	22
1. Հարկային և մաքսային օրենսդրության նորություններ.....	22
2. Եվրասիական տնտեսական միության օրենսդրության նորություններ.....	66
<i>Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշումներ</i>	<i>66</i>
<i>Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի որոշումներ.....</i>	<i>71</i>

2025թ.-ի 4-րդ եռամսյակում ընդունված հարկային և մաքսային հարաբերությունները կարգավորող նորմատիվ իրավական ակտեր¹




¹ 2025թ.-ի 4-րդ եռամսյակում պաշտոնական հրապարակված իրավական ակտերի համառոտ նկարագրերը ներկայացված են Հավելվածում:

II. ՀՀ ՊԵԿ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

1. ՀՀ ՊԵԿ կողմից վերահսկվող հարկային եկամուտներ և պետական տուրք

Հ/Հ	Ցուցանիշ	2025թ. 4-րդ եռամսյակ		2025թ. հունվար - դեկտեմբեր	
		Գումար (հազ. դրամ)	Աճի տեմպ % ²	Գումար (հազ. դրամ)	Աճի տեմպ %
1.1	ՀՀ ՊԵԿ կողմից ՀՀ պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտներ և պետական տուրք, այդ թվում՝	712,428,327.9	114.2%	2,725,242,557.5	114.0%
1.1.1	Հարկային մարմնի կողմից գանձված	564,673,390.3	116.5%	2,222,111,616.7	114.5%
1.1.2	Մաքսային մարմնի կողմից գանձված	147,754,937.6	106.4%	503,130,940.8	111.6%




² Աճի տեմպը հաշվարկվում է որպես հաշվետու ժամանակաշրջանի ցուցանիշի հարաբերություն նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի միևնույն ցուցանիշի նկատմամբ (4, 5, 7, 8, 10 բաժիններում հաշվարկման հիմք է հանդիսանում գումարային ցուցանիշը): Այն դեպքում, երբ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի միևնույն ցուցանիշը եղել է 0, աճի տեմպ չի հաշվարկվում:

2. ՀՀ բյուջեից փոխհատուցված (վերադարձված) գումարներ

Հ/Հ	Ցուցանիշ	2025թ. 4-րդ եռամսյակ		2025թ. հունվար - դեկտեմբեր	
		Գումար (հազ. դրամ)	Աճի տեմպ %	Գումար (հազ. դրամ)	Աճի տեմպ %
2.1	ՀՀ բյուջեից փոխհատուցված (վերադարձված) գումար, այդ թվում՝	115,319,240.0	116.3%	403,355,417.2	102.9%
2.1.1	ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարների մասով միասնական հաշվին մուտքագրված գումար	80,844,594.5	114.6%	278,939,860.8	96.3%
2.1.2	Ակցիզային հարկի փոխհատուցվող գումարի մասով միասնական հաշվին մուտքագրված գումար	1,302,452.1	51.0%	11,487,156.7	102.2%
2.1.3	Եկամտային հարկի փոխհատուցվող գումար այդ թվում՝	32,480,169.0	126.9%	110,469,995.1	124.4%
2.1.3.1	Հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների մասով փոխհատուցված գումար	25,456,302.3	134.3%	95,605,717.0	139.4%
2.2	Սոցիալական ծախսերի մասով փոխհատուցված գումար	1,977,076.5	6037.4%	5,786,673.4	1704.6%


ՀՀ բյուջեից փոխհատուցված (վերադարձված) գումար (հազ.դրամ)



3. Հարկ վճարողների հաշվառում

Հ/Հ	Ցուցանիշ	2025թ. 4-րդ եռամսյակ		2025թ. հունվար - դեկտեմբեր	
		Քանակ	Աճի տեմպ %	Քանակ	Աճի տեմպ %
3.1	Նոր գրանցված հարկ վճարողների թիվ, որից՝	566,433	2995.9%	688,316	479.7%
3.1.1	ֆիզիկական անձ	563,865	3395.8%	678,051	506.2%
3.1.2	այդ թվում՝ ԱԶ	6,316	123.0%	24,767	105.7%
3.1.3	իրավաբանական անձ	2,568	111.6%	10,265	107.6%
3.2	Լուծարված կամ պետական հաշվառումից հանված հարկ վճարողների թիվ, որից՝	1,824	106.0%	7,113	108.2%
3.2.1	ԱԶ	1,705	101.3%	6,849	110.1%
3.2.2	իրավաբանական անձ	119	313.2%	264	73.7%
3.3	Օրինապահ հարկ վճարողի հավաստագիր ստացած հարկ վճարողներ	12	120.0%	57	68.7%


Նոր գրանցված հարկ վճարողներ



4. Արտաքին տնտեսական գործունեության ցուցանիշներ

Հ/Հ	Ցուցանիշ	2025թ. 4-րդ եռամսյակ			2025թ. հունվար - դեկտեմբեր		
		Քանակ	Ապրանքա- շրջանառություն (հազ. դրամ)	Աճի տեմպ %	Քանակ	Ապրանքա- շրջանառություն (հազ. դրամ)	Աճի տեմպ %
4.1	Արտաքին տնտեսական գործունեություն իրականացնողներ, այդ թվում՝	12,153	2,567,504.1	109.5%	19,265	8,159,648.5	69.8%
4.1.1	արտահանում	1,697	1,027,843.2	112.4%	2,888	3,206,169.7	63.4%
4.1.2	ներմուծում	11,575	1,539,660.8	107.6%	18,454	4,953,478.8	74.7%


Արտաքին տնտեսական գործունեություն իրականացնողներ (մլն. դրամ)




5. Գործարքների փաստաթղթավորման ցուցանիշներ

Հ/Հ	Ցուցանիշ	2025թ. 4-րդ եռամսյակ			2025թ. հունվար - դեկտեմբեր		
		Քանակ	Գումար (հազ. դրամ)	Աճի տեմպ %	Քանակ	Գումար (հազ. դրամ)	Աճի տեմպ %
5.1	ՀԴՄ-ներով հայտարարագրված ցուցանիշներ, այդ թվում՝	246,644,539	994,869,317.9	115.6%	908,139,870	3,380,630,523.5	114.2%
5.1.1	առանց տաքսիների ՀԴՄ տվյալների	219,067,783	962,212,423.6	115.6%	802,634,189	3,258,972,345.6	111.5%
5.1.2	տաքսիների ՀԴՄ տվյալներ	27,576,756	32,656,894.4	114.1%	105,505,681	121,658,177.9	318.7%
5.2	Հաշվարկային փաստաթղթերով հայտարարագրված ցուցանիշներ	14,681,898	3,890,792,110.8	117.5%	54,724,121	12,722,990,586.3	116.1%

Փաստաթղթավորված գործարքների քանակ
(հազ. հատ)




Փաստաթղթավորված գործարքների գումար
(մլրդ. դրամ)



6. Եկամուտ ապահոված աշխատատեղերի վերաբերյալ ցուցանիշներ

Հ/Հ	Ցուցանիշ	2025թ. 4-րդ եռամսյակ			2025թ. հունվար - դեկտեմբեր		
		Քանակ	Գումար	Աճի տեմպ %	Քանակ	Գումար	Աճի տեմպ %
6.1	Հարկման բազա ունեցող աշխատատեղերի միջին քանակ	815,851	x	104.6%	792,973	x	105.2%
6.2	Միջին հարկման բազա (եկամուտ) (մլն.դրամ)	x	283,519.7	110.5%	x	256,061.1	110.6%
6.3	1 աշխատատեղին բաժին ընկնող միջին հարկման բազա (եկամուտ) (դրամ)	x	347,274.8	105.5%	x	322,553.1	105.2%

Աշխատատեղերի քանակ ըստ ամիսների




7. Հարկային հսկողության դրվագներ ³							
Հ/Հ	Ցուցանիշ	2025թ. 4-րդ եռամսյակ			2025թ. հունվար - դեկտեմբեր		
		Քանակ	Գումար ⁴ (հազ. դրամ)	Աճի տեմպ %	Քանակ	Գումար (հազ. դրամ)	Աճի տեմպ %
7.1	Համալիր հարկային ստուգում (այդ թվում՝ վերստուգում)	119	14,191,112.3	59.6%	548	39,630,419.0	67.5%
7.1.1	այդ թվում՝ ճշտված հարկային հաշվարկներով	100	11,539,921.0	112.9%	449	31,073,096.6	110.6%
7.2	Լուծարային ստուգում	77	82,986.7	482.3%	328	177,801.9	5.4%
7.2.1	այդ թվում՝ ճշտված հարկային հաշվարկներով	17	81,396.7	482.9%	67	175,711.9	5.3%
7.3 ⁵	Թեմատիկ հարկային ստուգում (ԹՍ)	2,316	954,627.1	80.9%	9,567	3,932,220.2	111.6%
	այդ թվում՝ թեմատիկ հարկային ստուգման հարցեր	×	×	×	×	×	×
7.3.1	Հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման ճշտություն (ՀԴՄ)	2,088	627,823.0	72.6%	8,775	2,742,723.4	118.8%
7.3.2	Աշխատողի աշխատանքի ընդունումն օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու և (կամ) աշխատողի համար գրանցման հայտ ներկայացնելու ճշտություն (ՉԱ)	387	219,500.0	136.1%	1,500	720,000.0	129.6%
7.3.3	«Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում ու կարգով վճարային քարտերով անկանխիկ վճարումներ ընդունման, այդ թվում՝ վճարային քարտերով անկանխիկ վճարումներ ընդունելու հնարավորության ապահովման կամ կանխիկ դրամով գումարի ընդունման սահմանափակումների պահպանման ճշտություն (ԱնկանխիկԳ)	158	35,100.0	81.8%	967	170,300.0	45.0%


³ Տեղեկանքում ընդգրկված են հաշվետու եռամսյակում կազմված բոլոր ակտերն ու արձանագրություններն՝ անկախ դրանց ուժի մեջ մտնելու կամ վիճարկման գործընթացում գտնվելու հանգամանքից:

⁴ Համալիր հարկային ստուգումների և թեմատիկ ուսումնասիրությունների գծով գումարում ներառված են նաև այդ հսկողական միջոցառումների ընթացքում ներկայացված ճշտված հարկային հաշվարկներով առաջացած հարկային պարտավորությունները:

⁵ Թեմատիկ ստուգումների 7.3 կետով ներկայացվող քանակական ցուցանիշը տարբերվում է 7.3.1 - 7.3.6 ենթակետերով ներկայացված քանակական ցուցանիշների հանրագումարից՝ պայմանավորված այն հանգամանքով, որ մեկ թեմատիկ ստուգումը կարող է պարունակել 2 և ավելի ստուգվող հարցեր:

7.3.4	Պետական տուրքի հաշվարկման և գանձման ճշտություն (ՊՏ)	×	×	×	7	2,000.0	133.3%
7.3.5	Ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների կամ նույնականացման միջոցների կիրառման ճշտություն (ԱԿ/Դ)	27	71,604.1	65.2%	150	293,496.9	105.0%
7.3.6	Հարկ վճարողի գործունեության իրականացման հասցեում սահմանված տեղեկություններ փակցնելը (ՏՓ)	7	600.0	-	54	3,700.0	1850.0%
7.4	Միասնական հաշվին մուտքագրման գումարների հիմնավորվածության ուսումնասիրություն (Միաս. Ուս.)	2,178	98,657.5	30.0%	8,336	184,835.9	44.6%
7.5	Չափագրման ուսումնասիրություն (ՉՓՄ)	170	3,031,779.2	61.1%	396	14,297,822.7	125.6%
7.6	Թեմատիկ ուսումնասիրություն (ԹՈԻ)	152	4,495,136.9	127.1%	530	22,933,084.6	139.2%
7.6.1	այդ թվում՝ ճշտված հարկային հաշվարկներով	15	134,192.7	65.7%	55	917,926.6	92.3%





⁶ Մաքսային մարմինների կողմից իրականացված ստուգումների արվեստը ներառված են քրեական գործերի շրջանակներում իրականացված մաքսային ստուգումների քանակները և առաջադրված գումարները:


9. Բողոքարկումներ և ստացված հարցադիմումներ

Հ/Հ	Ցուցանիշ	2025թ. 4-րդ եռամսյակ		2025թ. հունվար - դեկտեմբեր	
		Քանակ	Աճի տեմպ %	Քանակ	Աճի տեմպ %
9.1	ՀՀ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի կողմից ընդունված որոշումներ, որից՝	421	119.6%	2,281	98.1%
9.1.1	բավարարվել է	104	107.2%	593	69.4%
9.1.2	բավարարվել է մասնակի	34	136.0%	166	193.0%
9.1.3	մերժվել է	219	117.1%	1210	111.2%
9.1.4	կասեցվել է	0	-	1	-
9.1.5	կարճվել է	64	148.8%	311	105.1%
9.1.6	վերստուգում	0	-	0	-
9.2	ՀՀ ՊԵԿ հեռախոսագանգերի կենտրոն-բաժնի կողմից ստացված հարցադիմումներ, որից՝	40,204	77.1%	209,728	97.8%
9.2.1	կատարվել է	43,339	83.6%	208,921	97.9%

Կարճման որոշումները նախորդ տարվա համեմատ ավելացել են 5.1 %-ով: Նման որոշումները հիմնականում ընդունվում են բողոքարկման ժամկետների բացթողման կամ հարկային մարմնի կողմից բողոքարկվող անհատական իրավական ակտի, գործողության կամ անգործության բացակայության դեպքերում: Ուշագրավ է, որ ստուգման ակտերի դեմ բողոքների մասով կարճման որոշումները 2025թ.-ին շուրջ 3 անգամ նվազել են 2024թ.-ի համեմատ՝ 112-ից դառնալով 40: Փոխարենը աճել են անձնական հաշվի քարտերին վերաբերելի և վարչական իրավախախտումների մասով գործերով կարճման դեպքերը:

Մերժման որոշումները նախորդ տարվա համեմատ ավելացել են 11.2%-ով: Այստեղ մեծ բաժինը ընկնում է նույնականացման միջոցների կիրառման ճշտության ստուգման ակտերի մասով բողոքներին: Նշված ակտերի դեմ բողոքների մասով 2025թ.-ին կայացվել է թվով 179 մերժման որոշում՝ 2024թ.-ի 59 որոշման դիմաց:

**ՀՀ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի կողմից
ընդունված որոշումներ**




10. Հարկային և մաքսային վարչարարության դրվագներ

Հ/Հ	Ցուցանիշ	2025թ. 4-րդ եռամսյակ			2025թ. հունվար - դեկտեմբեր		
		Քանակ	Գումար (հազ. դրամ)	Աճի տեմպ %	Քանակ	Գումար (հազ. դրամ)	Աճի տեմպ %
10.1	Հարկային մարմնի և մաքսային մարմնի մասով կայացված գանձման որոշումներ, ՀՀ ՊԵԿ-ի դեմ ներկայացված հայցադիմումներ, սնանկության դիմումներ	x	x	x	x	x	x
10.1.1	Գանձման որոշումներ	33,463	2,583,562.7	1599.4%	121,703	144,338,832.6	118.5%
10.1.2	ՀՀ ՊԵԿ կողմից ներկայացված սնանկության դիմումներով վճիռներ, որոնք բավարարվել են	122	5,335,375.7	586.7%	460	41,817,131.6	320.5%
10.1.3	ՀՀ ՊԵԿ կողմից ներկայացված սնանկության դիմումներով վճիռներ, որոնք մերժվել են	11	3,356,115.9	10.0%	48	1,826,202.4	248.9%

10.1.4	ՀՀ ՊԵԿ-ի դեմ ներկայացված հայցադիմումներ, այդ թվում՝ նոր հայցադիմումներ, որոնք բավարարվել են	200	1,611,807.4	89.5%	1,202	10,731,137.9	99.0%
10.1.5	ՀՀ ՊԵԿ-ի դեմ ներկայացված հայցադիմումներ, այդ թվում՝ նոր հայցադիմումներ, որոնք մերժվել են	62	50,078,494.6	0.6%	443	59,051,379.4	107.5%
10.2	ՀՀ հարկային օրենսգրքի 428-րդ հոդվածով (ՀՀ հարկային օրենսգրքի 402.1-ին, 402.2-րդ, 407-410-րդ, 422-րդ և 423-րդ հոդվածներ) սահմանված վարչական վարույթներ	x	x	x	x	x	x
10.2.1	Հարուցված վարույթներ	477	399,246.1	138.4%	1,212	1,880,142.3	1.8%
10.2.2	Կազմված վարչական ակտեր	347	399,246.1	-	997	1,880,142.3	1.8%
10.3	Հարկային մարմնի և մաքսային մարմնի մասով վարչական տույժ նշանակելու մասին որոշումներ	10,770	324,098.8	161.1%	47,474	1,703,820.3	122.8%
11. Ծառայողական քննություններ							
Հ/Հ	Ցուցանիշ	2025թ. 4-րդ եռամսյակ		2025թ. հունվար - դեկտեմբեր			
		Քանակ	Աճի տեմպ %	Քանակ	Աճի տեմպ %		
11.1	ՀՀ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից քննարկված ծառայողական քննության ընթացքում ստեղծված նյութեր, որից՝	48	533.3%	119	152.6%		
11.1.1	կարգապահական պատասխանատվության ենթարկված ծառայողների թիվ	22	733.3%	81	208%		

Ծառայողական քննություններ



12. Ուսումնական ծրագրեր

Հ/Հ	Ցուցանիշ	2025թ. 4-րդ եռամսյակ		2025թ. հունվար - դեկտեմբեր	
		Քանակ	Աճի տեմպ %	Քանակ	Աճի տեմպ %
12.1	Հարկ վճարողների համար կազմակերպված դասընթացներ	27	108.0%	90	96.8%
12.1.1	մասնակիցներ	607	111.0%	1,865	93.0%
12.1.2	դասաժամեր	378	155.6%	979	68.4%
12.2	Հարկային ծառայողի պատրաստման դասընթացներ	8	-	41	683.3%
12.2.1	մասնակիցներ	208	-	872	302.8%
12.3	Մաքսային ծառայողի պատրաստման դասընթացներ	-	-	14	87.5%
12.3.1	մասնակիցներ	-	-	279	65.2%


III ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Տնտեսական ակտիվություն

• 2025թ. 9 ամիսներին անվանական ՀՆԱ-ն կազմել է 7,729.6 մլրդ դրամ, ինչը նախորդ տարվա համեմատ աճել է 669.3 մլրդ դրամով կամ 9.48 տոկոսով: ՀՆԱ-ի իրական աճը կազմել է 6.02 տոկոս, ՀՆԱ-ի դեֆլատորը՝ 3.3 տոկոս: ՀՆԱ-ի իրական աճի և դեֆլատորի փաստացի ցուցանիշներն ըստ էության համահունչ են 2026-2028 թվականների ՄԺԾԾ-ով 2025թ. համար սպասվող նույն ցուցանիշներին (ՀՆԱ-ի իրական աճը սպասվում է 5.1, իսկ դեֆլատորը 2.5 տոկոս):

• 2025թ. հունվար-նոյեմբեր ամիսներին ՏԱՑ-ը կազմել է 108.3 տոկոս, իսկ ՍԳԻ-ն՝ 103.3 տոկոս, ինչը գտնվում է ԿԲ-ի սահմանած 3% +/- 1 տոկոսային կետ տիրույթում: Ընդ որում, հատկանշական է, որ թեև ՍԳԻ-ն տարեսկզբից ունեցել է էական աճի միտում, հունվարի 101.7 տոկոսից սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին հասել է 103.7 տոկոս, այնուհետև նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին նվազել է համապատասխանաբար՝ 103.1 և 103.3 տոկոս աճի տեմպերով՝ տարեվերջին ապահովելով աճողական 103.3 տոկոս:

ՏԱՑ-Ի, ՍԳԻ-Ի ԵՎ ՀԱՐԿԵՐԻ ՀԱՎԵԼԱՃԻ ՏԵՄՊԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ (ԱՃՈՂԱԿԱՆ, %)




2. Հարկերի համադրություն տնտեսական ակտիվության հետ

- 2025թ. տարեկան հարկային եկամուտների կատարողականը ծրագրային առաջադրանքի նկատմամբ կազմել է 100.2 տոկոս, ինչը ըստ էության փաստում է, որ հարկերի հավաքագրման մասով արձանագրված ցուցանիշները ևս համադրելի են տնտեսության աճի միտումներին:

- 2025թ. տարեկան հարկային եկամուտները նախորդ տարվա նկատմամբ աճել են 334.3 մլրդ դրամով կամ 14.0 տոկոսով: Ըստ ոլորտների, նշված ցուցանիշի վրա դրական են ազդել շինարարության ոլորտի կողմից բյուջե մուտքագրված հարկային եկամուտների աճը շուրջ 55.7 մլրդ դրամով, որից միայն ԱԱՀ-ի հաշվին՝ 38.2 մլրդ դրամով, իսկ միայն շահութահարկի հաշվին՝ 9.5 մլրդ դրամով: Բանկերի կողմից բյուջե մուտքագրված հարկային եկամուտների աճը շուրջ 44.4 մլրդ դրամով, որից միայն շահութահարկի հաշվին՝ 24.3 մլրդ դրամով, իսկ միայն եկամտային հարկի հաշվին՝ 19.3 մլրդ դրամով: Մյուս կողմից՝ տվյալ ժամանակաշրջանի հարկային եկամուտների աճի վրա իր բացասական ազդեցությունն է թողել հանքարդյունաբերության ոլորտի կողմից բյուջե մուտքագրված հարկային եկամուտների նվազումը շուրջ 27.9 մլրդ դրամով, որից միայն ռոյալթիի հաշվին՝ 34.5 մլրդ դրամով:

- 2025թ. տարեկան արդյունքներով ՀՀ-ում հավաքագրվել է 131.1 մլրդ դրամ մաքսատուրք, որից ԵՏՄփոխանցվել-բաշխվել է շուրջ 125.4 մլրդ դրամ: Փաստացի ԵՏՄ ընդհանուր կաթսայից ՀՀ-ին է բաշխվել ընդամենը 69.5 մլրդ դրամ կամ ՀՀ-ի փոխանցած գումարից 61.6 մլրդ դրամով կամ 47.0 տոկոսով պակաս: Ընդհանուր մաքսատուրքի գծով պետական բյուջեի մուտքը կազմել է 75.2 մլրդ դրամ, ինչը 1.0 մլրդ դրամով կամ 1.3 տոկոսով պակաս է, քան նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

- 2025թ. 9 ամիսների հարկերի սահունության գործակիցը կազմել է 1.47, ինչը նշանակում է, որ ՀՆԱ-ի 1 տոկոս աճն ապահովել է հարկերի առաջանցիկ 1.47 տոկոս աճ: Չնայած պետք է նկատի ունենալ, որ այս ցուցանիշը ներառում է նաև նախորդ ժամականաշրջաններում հարկման բազաների ձևավորման և ընթացիկ տարում դրանց վճարման ժամկետների տարբերությամբ պայմանավորված ազդեցության գործոնը, որը հաշվի առնելու դեպքում այն որոշակիորեն կարող է փոփոխվել:



IV. ՀՀ ՊԵԿ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Վրաստանի հետ համագործակցության շրջանակում աշխատանքներ են տարվել **Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) հետ համատեղ** իրականացվող հայ-վրացական սահմանային անցակետերի արդիականացման և համատեղ օգտագործման ցամաքային մաքսային անցման կետի ներդրման ծրագրի ուղղությամբ, մասնավորապես՝ 2025թ. հոկտեմբերի 30-ին Թբիլիսիում հայկական պատվիրակությունը մասնակցել է հայ-վրացական Համատեղ կոմիտեի կողմից ձևավորված Համատեղ աշխատանքային խմբի՝ մաքսային և սահմանապահ հսկողության մարմինների միջև ԱԶԲ աջակցությամբ կազմակերպված երկրորդ աշխատաժողովին (առաջին աշխատաժողովը տեղի է ունեցել Երևանում՝ 2025թ. հուլիսի 24-ին)։ Թբիլիսիում կայացած հանդիպման ընթացքում ԱԶԲ կողմից ներկայացվել է վերլուծություն, մասնավորապես՝ «Միասնական կամ ընդհանուր հարմարություններով» մոդելի և դրա ենթատեսակների ընդհանուր նկարագիրը և ներդրման հայեցակարգը, ինժեներատեխնիկական նախագիծը, սահմանային համատեղ հսկողության անցակետի ներդրման գործողությունների ծրագիրը, անցման կետի շահագործման հիմնական սկզբունքները։ Քննարկվել է հատկապես «Մեկ պատուհան» սկզբունքի կիրառման, ինտեգրված տեղեկատվական համակարգերի գործարկման, ժամանակակից չափանիշներին համապատասխան ենթակառուցվածքների և համատեղ հսկողության գոտու ստեղծման միջոցով սահմանահատման գործընթացների պարզեցման հնարավորությունների ստեղծման հետ կապված հարցերի լայն շրջանակ։

ՀՀ փոխվարչապետ Մ. Գրիգորյանի որոշմամբ ծրագրի շրջանակում ստեղծվել է Միջգերատեսչական աշխատանքային խումբ (12.12.2025, N 792-Ա)՝ ՀՀ և Վրաստանի միջև համատեղ օգտագործման ցամաքային մաքսային անցման կետերի պլանավորման, նախագծման, շահագործման և մշտադիտարկման աշխատանքներին աջակցելու նպատակով։

Ծրագրի շրջանակում արդեն իսկ ընտրված է այն անցակետը, որտեղ նախատեսվում է նախագծել համատեղ օգտագործման ցամաքային մաքսային անցման կետի ներդրման պիլոտը։

Իրանի Իսլամական Հանրապետության հետ համագործակցության շրջանակում Երևանում տեղի ունեցել հանդիպում՝ ԻԻՀ մաքսային վարչության ղեկավարի և ՊԵԿ նախագահի միջև՝ 2025թ. նոյեմբերի 18-ին։ Քննարկվել են երկու երկրների մաքսային ծառայությունների միջև նախնական էլեկտրոնային տվյալների փոխանակման համակարգի գործարկման, հայ-իրանական սահմանին «Պարզեցված մաքսային միջանցքի» ներդրման, լիազորված տնտեսական օպերատորների փոխադարձ ճանաչման համաձայնագրի կնքման նպատակահարմարության վերաբերյալ հարցեր։ Հանդիպման ավարտին ստորագրվել է հանդիպման արդյունքների մասին արձանագրություն։ Հայ-իրանական սահմանին Պարզեցված կամ Կանաչ մաքսային միջանցքի ներդրմանն ուղղված աշխատանքների շրջանակում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և ԻԻՀ մաքսային վարչության միջև նախատեսվող՝ «Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության տարածքներով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների վերաբերյալ նախնական տեղեկատվության փոխանակման կազմակերպման մասին («Պարզեցված մաքսային միջանցք»)» արձանագրության նախագիծը ՀՀ ՊԵԿ կողմից փոխհամաձայնեցման նպատակով ներկայացվել է ՀՀ ԱԳՆ։

Չինաստանի հետ համագործակցության շրջանակում Լիազորված տնտեսական օպերատորների (LSO) փոխճանաչման ծրագրի մեկնարկի, փոխճանաչման հնարավորությունները համակողմանիորեն քննարկելու և գնահատելու նպատակով ՀՀ ՊԵԿ-ի և ՉԺՀ մաքսային գլխավոր վարչության պաշտոնատար անձանց միջև Երևանում 2025թ. դեկտեմբերին տեղի է ունեցել դեմ առ դեմ ձևաչափով հանդիպում։ Նշված համատեքստում աշխատանքներ են իրականացվում «Չինաստանի Ժողովրդական Հանրապետության մաքսային գլխավոր վարչության և Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի միջև լիազորված տնտեսական օպերատորի ծրագրի փոխճանաչման մասին» համաձայնագրի նախագծի մշակման ուղղությամբ։

Ուզբեկստանի Հանրապետության հետ համագործակցության շրջանակում ՊԵԿ կողմից մշակվել և ներպետական համաձայնեցման են դրվել «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի և Ուզբեկստանի Հանրապետության էկոնոմիկայի և ֆինանսների նախարարության պետական մաքսային կոմիտեի միջև մաքսային սահմանը հատող ապրանքների և տրանսպորտային միջոցների վերաբերյալ նախնական տեղեկատվության փոխանակումը կազմակերպելու մասին» և «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ուզբեկստանի Հանրապետության կառավարության միջև մաքսային հարցերով համագործակցության և փոխադարձ օգնության մասին» համաձայնագրերի նախագծերը:

Շվեդիայի Թագավորության հարկային գործակալության հետ համագործակցության շրջանակում գործակալության կողմից Ստոկհոլմում 2025թ. հոկտեմբերին ՊԵԿ աշխատակիցների համար կազմակերպվել է ճանաչողական այց: ՊԵԿ պատվիրակությունը ծանոթացել է Շվեդիայի հարկային մարմնի գործունեությանը, մասնավորապես՝ ռազմավարական կառավարման, կարգապահական և գործառնական ռիսկերի, մարդկային ռեսուրսների կառավարման, հարկ վճարողներին մատուցվող թվային ծառայությունների, ստուգումների իրականացման, տրանսֆերային գնագոյացման և Միասնական հաշվետվողական ստանդարտի ներդրման ոլորտներում իրականացվող աշխատանքներին:

Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) հայաստանյան գրասենյակի հետ համագործակցության շրջանակում մաքսային լաբորատորիայի ներդրման ու գործարկման նպատակով GIZ հայաստանյան գրասենյակի հետ համատեղ մշակվել է տեխնիկական աջակցության ծրագիր, մաքսային լաբորատորիայի ինստիտուցիոնալ և իրավական մոդելի մշակման համար հայտարարված բաց մրցույթի արդյունքում ընտրվել համապատասխան փորձագետ, որի հետ GIZ կողմից կնքված պայմանագրով սահմանված առաքելությունն ավարտվել է՝ լաբորատորիաների 3 հնարավոր մոդելների ներկայացմամբ՝ 1. ՊՈԱԿ-ի 2. մաքսային ծառայության ներքո գործող վարչության, 3. գործակալության ֆորմատներով: Ներկայումս սահմանային անցակետերի արդիականացման ծրագրի շրջանակի մեջ ներառված է նաև մաքսային լաբորատորիայի կառուցման ծրագիրը, և տվյալ պահին ՎՋԵԲ-ի կողմից իրականացվում է մաքսային լաբորատորիայի տեխնիկա-տնտեսական ուսումնասիրություն/վերլուծություն (feasibility study):

GIZ-ի աջակցությամբ նախագծվել է նաև արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների համար ապրանքների տեղափոխման հետ կապված գործընթացների մասով էլեկտրոնային տեղեկատվական հարթակ (**EXIM**): Հայտարարված մրցույթի արդյունքում հաղթած **GovTech** ընկերության հետ GIZ կողմից կնքված պայմանագրով ամրագրված պարտավորությունները GovTech ընկերության կողմից ավարտվել են: ՊԵԿ-ը նախատեսում է զբաղվել հարթակի բովանդակության ձևավորմամբ, համապատասխան տեղեկատվության ներբեռնմամբ և գործարկման մեխանիզմների մշակմամբ, որի նպատակով ստեղծվել է համապատասխան աշխատանքային խումբ:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎՋԵԲ) հետ համագործակցության շրջանակում աշխատանքներ են իրականացվում Սահմանային անցման կետերի արդիականացման ծրագրի իրագործման շրջանակներում սահմանային բոլոր անցակետերը մաքսային հսկողության ժամանակակից տեխնիկական սարքավորումներով վերազինելու, ինչպես նաև մաքսային լաբորատորիա կառուցելու ուղղությամբ: Ներկայումս ՎՋԵԲ կողմից իրականացվում է մաքսային լաբորատորիայի տեխնիկա-տնտեսական ուսումնասիրություն/վերլուծություն (feasibility study), որի արդյունքում գործնականում ի հայտ կբերվեն և կձևավորվեն մաքսային լաբորատորիայի ներդրման համար անհրաժեշտ պահանջները, ներդրումների ուղղությունները, ծավալները և այլն:

Վերակառուցման և զարգացման բանկի հետ իրականացվում է նաև ՊԵԿ-ում ենթակառուցվածքների զարգացման խոշոր ծրագրերի կառավարման կարողությունների զարգացման նպատակով թվով 4 փորձագետների ներգրավման ծրագիր:

Համաշխարհային մաքսային կազմակերպության (ՀՄԿ) հետ համագործակցության շրջանակում 2025թ. հոկտեմբերին ՊԵԿ նախաձեռնությամբ և Համաշխարհային մաքսային կազմակերպության աջակցությամբ ՊԵԿ Ուսումնական կենտրոնում Մաքսանենգության դեմ պայքարի վարչության մաքսային ծառայողների համար կազմակերպվել է «Թմրանյութերի հայտնաբերման կարողությունների զարգացման»

թեմայով հնգօրյա աշխատաժողով: Աշխատաժողովի նպատակն է եղել բարելավել ՀՀ մաքսային ծառայողների մասնագիտական կարողությունները թմրանյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի ոլորտում՝ ներկայացնելով ապրանքների անվտանգ տեղափոխման ապահովմանը նպաստող՝ արդի մարտահրավերներին համապատասխան ժամանակակից գործիքակազմեր և մեխանիզմներ՝ զարգացման համաշխարհային միտումներին համահունչ:

ՀՄԿ կողմից իրականացվող՝ Կենտրոնական Ասիայի և Կովկասի մաքսային վարչարարության անվտանգային ծրագրի (CCASP) շրջանակներում 2025թ. նոյեմբերին Երևանում Հայաստանի Հանրապետության և Վրաստանի մաքսային մարմինների առաջնագծի մաքսային ծառայողների համար կազմակերպվել է վերապատրաստման դասընթաց՝ ուղղված փոքր և թեթև զենքի (SALW), ներառյալ անօդաչու թռչող սարքերի (UAVs) ապօրինի անդրսահմանային տեղաշարժի բացահայտման և վերահսկման կարողությունների զարգացմանը:

Զարգացման ֆրանսիական գործակալության (ՉՖԳ) հետ համագործակցության շրջանակում 2025թ. նոյեմբերին տեղի է ունեցել հանդիպում ՊԵԿ նախագահի և Հայաստանում ծրագրերի նորանշանակ պատասխանատու Մարին Լեգարդի միջև: Քննարկվել են հարկային և մաքսային վարչարարության բարելավմանը միտված նոր տեխնիկական աջակցության կարիքներն ու հետագա համագործակցության հնարավոր ուղղությունները՝ կարևորելով խաղային գործունեության բարելավման ուղղությամբ տրամադրվող աջակցության շարունակականությանը, կրիպտոարժույթների և բլոգերների հարկմանը, հարկ վճարողների սպասարկման բարելավման նպատակով նորարարական տեխնոլոգիաների (AI, Chatbot) ներդրմանն ու վարկավորման հնարավոր սպասվելիք ուղղություններին առնչվող մի շարք հարցեր:

Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) հետ համագործակցության շրջանակում ԱՄՀ ներկայացուցիչների հետ տեղի են ունեցել առցանց քննարկումներ, ինչի արդյունքում հստակեցվել են ԱՄՀ կողմից տեխնիկական աջակցությունների տրամադրման հնարավոր ուղղությունները և հետագա համագործակցության շրջանակները:

ԱՄՀ հետ համագործակցության շրջանակում ԱՄՀ Հարկային վարչարարության ախտորոշիչ գնահատման գործիքի (TADAT) կիրառմամբ իրականացվել է ՀՀ հարկային վարչարարության համակարգի գնահատում, տրամադրվել հարկային վարչարարության կատարողականի գնահատման հիմքը, որը կարող է օգտագործվել բարեփոխումների առաջնահերթությունները որոշելու նպատակով: «Հարկային վարչարարության ախտորոշիչ գործիքի կիրառմամբ ՀՀ հարկային վարչարարության համակարգի գնահատման տեխնիկական աջակցության զեկույցի» հայերեն և անգլերեն տարբերակները հրապարակվել են ՊԵԿ պաշտոնական կայքում:

Համաշխարհային բանկի (ՀԲ) հետ համագործակցության շրջանակում ՀԲ Զարգացման Քաղաքականության Գործառնության (ԶՔԳ (DPO)) ծրագրի համատեքստում Հայաստանի համար նախատեսվող նոր բարեփոխումների ծրագրերի մշակման նպատակով կազմակերպված հանդիպումների ընթացքում ՊԵԿ նախագահի հետ 2025թ. դեկտեմբերին տեղի ունեցած հանդիպման շրջանակում քննարկվել են DPO-ի ներքո նախատեսվող բարեփոխումների շրջանակը և առևտրի դյուրացման համատեքստում ՊԵԿ-ի համար առաջնահերթ հիմնական ուղղությունները:

ԱՄՆ Արտահանման վերահսկման և սահմանների անվտանգության (EXBS) ծրագրի շրջանակում իրականացվել են ակտիվ աշխատանքներ «CertScan» համակարգի ներդրման, համակարգի հետ սկաներների ծրագրային ինտեգրման մեխանիզմների մշակման, կենտրոնացված վերլուծությունների իրականացման նպատակով Մոնիտորինգային կենտրոնի ստեղծման ուղղությամբ՝ «S2 Global» ընկերության աջակցությամբ:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) հետ համագործակցության շրջանակում 2025թ. հոկտեմբերին տեղի է ունեցել աշխատանքային հանդիպում՝ հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման Գլոբալ ֆորումի ներկայացուցիչների հետ: Քննարկվել են Հայաստանում Միասնական հաշվետվողական ստանդարտի արդյունավետ ներդրման և դրա կիրառման ընթացիկ փուլերը, մշակվել հետագա քայլերի ճանապարհային քարտեզ, որը կնպաստի համակարգի արդյունավետ ներդրմանը և շարունակական համագործակցության ամրապնդմանը: ՊԵԿ նախագահի գլխավորած պատվիրակությունը դեկտեմբերի 1-ից 5-ը Հնդկաստանում մասնակցել է ՏՀԶԿ հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման **Գլոբալ ֆորումի 18-րդ տարեկան**

համաժողովի շրջանակում անցկացվող Ասիական նախաձեռնության 9-րդ բարձրաստիճան հանդիպմանը: ՊԵԿ նախագահը, որպես համանախագահող, Մալդիվների հարկային մարմնի ղեկավար Հասան Ջարիրի հետ վարել է համաժողովը: Հանդիպմանը շեշտադրվել են հարկային եկամուտների հավաքագրման, հարկային կարգապահության բարձրացման և ապօրինի հարկային հոսքերի դեմ պայքարի ուղղությամբ տարվող աշխատանքները:

ԵԱՏՄ և ԱՊՀ հետ համագործակցության շրջանակներում՝

2025թ. հոկտեմբերին ՊԵԿ նախագահի գլխավորած պատվիրակությունը Ռուսաստանի Դաշնությունում մասնակցել է **ԱՊՀ մասնակից պետությունների հարկային ծառայությունների ղեկավարների համակարգող խորհրդի (ԱՊՀ ՀԾՂՀԽ) 32-րդ նիստին**, որին մասնակցում էին Ռուսաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի, Տաջիկստանի, Ուզբեկստանի հարկային մարմինների պատվիրակությունները, ինչպես նաև ԱՊՀ Գործադիր կոմիտեի ներկայացուցիչները: ՊԵԿ նախագահը հանդես է եկել «Հարկային տեսուչ՝ այսօր և վաղը» շնորհանդեսով՝ ներկայացնելով հարկային տեսուչի դերը պետականության ամրապնդման, հասարակություն-հարկ վճարող, հարկային ծառայող-պետություն փոխհարաբերությունների զարգացման համատեքստում:

2025թ. դեկտեմբերին ՊԵԿ նախագահի գլխավորած պատվիրակությունը Ռուսաստանի Դաշնությունում մասնակցել է **Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 52-րդ նիստին**, որին մասնակցել են նաև ԵԱՏՄ անդամ պետությունների մաքսային ծառայությունների պատվիրակությունները՝ ղեկավարների գլխավորությամբ: Միավորված կոլեգիայի նիստի ընթացքում քննարկվել և ստորագրվել է մաքսային գործի տարբեր բնագավառների կանոնակարգմանն առնչվող 26 որոշում:

2025թ. դեկտեմբերին ՀՀ նախագահի կողմից հաստատվել է 2024թ. սեպտեմբերին ստորագրված «ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ծառայությունների համար բարձրագույն կրթության կրթական ծրագրերով և մասնագիտական լրացուցիչ ծրագրերով կադրերի պատրաստման մասին» համաձայնագիրը:

Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության հետ աշխատանքների շրջանակում 2025թ. նոյեմբերին Պետական եկամուտների կոմիտեում առցանց ձևաչափով անցկացվել է Սևծովյան տնտեսական համագործակցության (ՄԾՏՀ) կազմակերպության Մաքսային հարցերով աշխատանքային խմբի նիստը, որի նախագահությունն առաջիկա երկու տարվա համար ստանձնել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեն: Որպես համակարգող երկիր՝ Հայաստանը նիստին ներկայացրել է Մաքսային հարցերի աշխատանքային խմբի 2025 թվականի հուլիսի 1-ից մինչև 2027 թվականի հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածի գործողությունների ծրագիրը, որը հավանության է արժանացել աշխատանքային խմբի կողմից: Փաստաթուղթը ներառում է տարածաշրջանային մաքսային համագործակցության խորացման, առևտրի և տարանցման դյուրացման, կարողությունների զարգացման, ապօրինի առևտրի դեմ պայքարի, թվային փոխակերպման և նորարարության, ինչպես նաև մաքսային օրենսդրության ու ընթացակարգերի ներդաշնակեցման առաջնահերթություններին համապատասխան գործողությունների ծրագիր:

1. Հարկային և մաքսային օրենսդրության նորություններ

1. Փաստաթուղթ	««Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	11.09.2025թ. ՀՕ-279-Ն
Հրապարակումը	06.10.2025թ.
Ուժի մեջ է	07.07.2026թ.
Հղում	https://www.arlis.am/hy/acts/213822/latest

Համառոտ նկարագիր

«Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքում կատարված լրացման արդյունքում սահմանվել է պետական տուրք՝

- մշակութային աճուրդի տան լիցենզիա տրամադրելու համար՝ տարեկան բազային տուրքի 1000-ապատիկի չափով,
- մշակութային աճուրդի կազմակերպչի լիցենզիա տրամադրելու համար՝ տարեկան բազային տուրքի 5000-ապատիկի չափով:

2. Փաստաթուղթ	««Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	11.09.2025թ. ՀՕ-290-Ն
Հրապարակումը	10.10.2025թ.
Ուժի մեջ է	20.10.2025թ.
Հղում	https://www.arlis.am/hy/acts/214361/latest

Համառոտ նկարագիր

«Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքում կատարված փոփոխությունների և լրացումների արդյունքում սահմանվել է պետական տուրք՝

- բարձրագույն կրթության երրորդ մակարդակին (դոկտորին) համապատասխան կրթական ծրագրի իրականացման համար՝ տարեկան բազային տուրքի 300-ապատիկի չափով,
- բարձրագույն կրթության ծառայությունների իրականացման համար՝ բազային տուրքի 300-ապատիկի չափով:

3. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք

Ամսաթիվը և համարը

24.10.2025թ. ՀՕ-324-Ն

Հրապարակումը

29.10.2025թ.

Ուժի մեջ է

30.10.2025թ.

Հղում

<https://www.arlis.am/hy/acts/215597/latest>

Համառոտ նկարագիր

ՀՀ հարկային օրենսգրքում կատարված լրացումների և փոփոխությունների արդյունքում՝

1. օրենսգրքի 156-րդ հոդվածի 4.1-ին մասի 1-ին պարբերությունը շարադրվել է այլ խմբագրությամբ, որի համաձայն՝ ՀՀ ռեզիդենտ հանդիսացող և տվյալ հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ քաղաքացի համարվող ֆիզիկական անձինք (բացառությամբ հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ անչափահաս համարվող ֆիզիկական անձանց) յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա մարտի 2-ից (մարտի 2-ը ոչ աշխատանքային օր լինելու դեպքում՝ հաջորդող աշխատանքային օրվանից) մինչև հուլիսի 1-ը ներառյալ օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում եկամտային հարկի տարեկան հաշվարկներ (հայտարարագրեր): Ընդ որում, տվյալ հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ քաղաքացի համարվելու դրույթը կիրառվում է 2024 թվականի հաշվետու տարվա և հետագա տարիների համար, ոչ իրացման նպատակով 2025թ. օգոստոսի 1-ից հետո ձեռք բերված կամ ներմուծված թեթև մարդատար ավտոմեքենաների մասով օրենսգրքով սահմանված կարգով չհաշվանցված (չպակասեցված) ԱԱՀ-ի գումարները ենթակա են վերաձևակերպման՝ հաշվանցման (պակասեցման) ենթակա ԱԱՀ-ի գումարներին ավելացման՝ օրենսգրքի 73-րդ հոդվածի 8.2-րդ մասին համապատասխան,

2. օրենսգրքը լրացվել է 156.1-ին հոդվածով, որին համապատասխան՝ օրենսգրքի 156-րդ հոդվածի 4.1-ին մասի համաձայն՝ եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու պարտավորություն կրող ֆիզիկական անձանց համար եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) նախալրացնում է հարկային մարմինը՝ իր տեղեկատվական բազայում առկա տվյալների հիման վրա:

Տվյալ հաշվետու տարվա համար եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու պարտավորություն կրող ֆիզիկական անձինք կարող են օրենսգրքի 156-րդ հոդվածի 4.1-ին մասով սահմանված ժամանակահատվածում փոփոխել հարկային մարմնի նախալրացրած եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) և օրենսգրքով սահմանված կարգով ներկայացնել հարկային մարմին, իսկ նշված ժամանակահատվածում օրենսգրքով սահմանված կարգով հարկային մարմին չներկայացվելու դեպքում հարկային մարմնի նախալրացրած հայտարարագիրը համարվում է օրենսգրքով սահմանված կարգով հարկային մարմին ներկայացված: Ընդ որում, նշված դեպքում հարկային հաշվարկը էլեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացնելու օր է համարվում եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) հարկային մարմին ներկայացնելու՝ օրենսգրքով սահմանված վերջնաժամկետի օրը,

3. սոցիալական ծախսը փոխհատուցվում է, եթե եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու պարտավորություն կրող անձը օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային մարմին է ներկայացրել էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը),

4. սոցիալական ծախսը փոխհատուցվում է, եթե եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու պարտավորություն կրող անձը օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային մարմին է ներկայացրել էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը),

5. կառավարությունը կարող է սահմանել եկամտային հարկի տարեկան հաշվարկում (հայտարարագրում) հայտարարագրման ոչ ենթակա եկամուտների տեսակներ կամ շեմեր:

4. Փաստաթուղթ

««Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք

Ամսաթիվը և համարը

24.10.2025թ. ՀՕ-325-Ն

Հրապարակումը

29.10.2025թ.

Ուժի մեջ է

30.10.2025թ.

Հղում

<https://www.arlis.am/hy/acts/215602/latest>

Համառոտ նկարագիր

Օրենքով կատարված փոփոխություններով և լրացումներով սահմանվել է, որ՝

1. անձնավորված հաշվառման տեղեկատվական բազան եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու պարտավորություն կրող ֆիզիկական անձանց դեպքում ներառում է նաև՝

- ընտանիքի անդամների՝ ամուսինների, ծնողների, քույրերի, եղբայրների և զավակների (որդեգրողների ու որդեգրվածների) վերաբերյալ տեղեկատվությունը,

- հարկային տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում գտնվելու ժամանակահատվածի վերաբերյալ տեղեկատվությունը,

- Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված անձնական եկամուտների, այդ թվում՝ նվազեցվող (չհարկվող) եկամուտների վերաբերյալ տեղեկատվությունը,

2. տեղեկատվական բազան ձևավորելու և վարելու համար անհրաժեշտ տվյալները լիազոր մարմինը ստանում է նաև ֆինանսական կազմակերպություններից: Ընդ որում, Հայաստանի Հանրապետության ֆինանսական կազմակերպությունները տվյալները տրամադրում են միայն ֆիզիկական անձի համաձայնության դեպքում,

3. տեղեկատվական բազան ձևավորելու և վարելու համար անհրաժեշտ տվյալները Հայաստանի Հանրապետության ֆինանսական կազմակերպությունների կողմից լիազոր մարմնին տրամադրվելու կարգը, փոխանցվող տեղեկությունների ձևաչափերը, ֆիզիկական անձի կողմից

համաձայնության տրամադրման կարգն ու ձևերը, ինչպես նաև տեխնիկաձրագրային կանոնները սահմանվում են կենտրոնական բանկի և հարկային մարմնի համատեղ հրամանով:

5. Փաստաթուղթ

««Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք

Ամսաթիվը և համարը

24.10.2025թ. ՀՕ-326-Ն

Հրապարակումը

29.10.2025թ.

Ուժի մեջ է

30.10.2025թ.

Հղում

<https://www.arlis.am/hy/acts/215599/latest>

Համառոտ նկարագիր

Օրենքով կատարված փոփոխությունների արդյունքում՝ դրոշմանիշային վճարներն ինքնուրույն կատարող՝ հարկային գործակալ չհանդիսացողից եկամուտ ստացող անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձինք դրոշմանիշային վճարը կատարում են տարեկան կտրվածքով՝ ՀՀ հարկային օրենսգրքով եկամտային հարկի վճարման համար սահմանված ժամկետներում, իսկ անհատ ձեռնարկատերերը և նոտարները՝ տարեկան կտրվածքով՝ ՀՀ հարկային օրենսգրքով շահութահարկի վճարման համար սահմանված ժամկետներում:

6. Փաստաթուղթ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք

Ամսաթիվը և համարը

24.10.2025թ. ՀՕ-327-Ն

Հրապարակումը

29.10.2025թ.

Ուժի մեջ է

30.10.2025թ.

Հղում

<https://www.arlis.am/hy/acts/215600/latest>

Համառոտ նկարագիր

Օրենքով եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու պարտավորություն ունեցող անձանց կողմից եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) հարկային մարմին չներկայացնելու համար սահմանված վարչական տույժը հանվել է:

7. Փաստաթուղթ

««Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրում հատուկ պաշտպանական, հակազնազցման և փոխհատուցման միջոցներ կիրառելու կամ չկիրառելու մասին ուսումնասիրություններ անցկացնելիս և որոշումներ ընդունելիս հատուկ մեխանիզմին վերաբերող մասում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունը վավերացնելու մասին» ՀՀ օրենք

Ամսաթիվը և համարը

22.10.2025թ. ՀՕ-331-Ն

Հրապարակումը

30.10.2025թ.

Ուժի մեջ է

31.10.2025թ.

Հղում<https://www.arlis.am/hy/acts/215663/latest>

Համառոտ նկարագիր

Օրենքով վավերացվել է 2024 թվականի դեկտեմբերի 26-ին Սանկտ Պետերբուրգ քաղաքում ստորագրված՝ ««Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրում հատուկ պաշտպանական, հակազնազցման և փոխհատուցման միջոցներ կիրառելու կամ չկիրառելու մասին ուսումնասիրություններ անցկացնելիս և որոշումներ ընդունելիս հատուկ մեխանիզմին վերաբերող մասում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունը:

8. Փաստաթուղթ

««Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք

Ամսաթիվը և համարը

22.10.2025թ. ՀՕ-365-Ն

Հրապարակումը

19.11.2025թ.

Ուժի մեջ է

20.02.2026թ.

Հղում<https://www.arlis.am/hy/acts/216722/latest>

Համառոտ նկարագիր

Օրենքով սահմանվել է, որ ֆիզիկական անձանց միջև ալիմենտի վճարումն իրականացվում է անկանխիկ ձևով:

9. Փաստաթուղթ

««Հարկային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք

Ամսաթիվը և համարը

13.11.2025թ. ՀՕ-370-Ն

Հրապարակումը

02.12.2025թ.

Ուժի մեջ է

03.12.2025թ.

Համառոտ նկարագիր

Օրենքով «Հարկային ծառայության մասին» օրենքի կարգավորումները համապատասխանեցվել են «Ձեռքի շրջանառության կարգավորման մասին» օրենքին և հստակեցվել են հարկային մարմնի հանրային ծառայողների կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի կիրառման հետ կապված հարաբերությունները:

10. Փաստաթուղթ**Ամսաթիվը և համարը****Հրապարակումը****Ուժի մեջ է****Հղում**

««Մաքսային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք

13.11.2025թ. ՀՕ-371-Ն

02.12.2025թ.

03.12.2025թ.

<https://www.arlis.am/hy/acts/217361/latest>

Համառոտ նկարագիր

Օրենքով «Մաքսային ծառայության մասին» օրենքի կարգավորումները համապատասխանեցվել են «Ձեռքի շրջանառության կարգավորման մասին» օրենքին և հստակեցվել են մաքսային մարմնի հանրային ծառայողների կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի կիրառման հետ կապված հարաբերությունները:

11. Փաստաթուղթ**Ամսաթիվը և համարը****Հրապարակումը****Ուժի մեջ է****Հղում**

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք

13.11.2025թ. ՀՕ-376-Ն

03.12.2025թ.

01.01.2026թ.

<https://www.arlis.am/hy/acts/217375/latest>

Համառոտ նկարագիր

ՀՀ հարկային օրենսգրքում կատարված փոփոխության և լրացումների արդյունքում ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի հարկման

բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցվում են Հայաստանի Հանրապետությունում իրականացվող տարրական, հիմնական, միջնակարգ, արհեստագործական, միջին մասնագիտական կամ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման լիցենզիա ունեցող պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին և պետության կամ համայնքի կողմից ստեղծված հիմնադրամներին կամ «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքի համաձայն ստեղծված հիմնադրամին տրամադրված ակտիվների, դրանց համար կատարված աշխատանքների և (կամ) դրանց մատուցված ծառայությունների արժեքը, բայց ոչ ավելի, քան հարկային տարվա համախառն եկամտի 2.5 տոկոսը:

12. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք

Ամսաթիվը և համարը

13.11.2025թ. ՀՕ-377-Ն

Հրապարակումը

03.12.2025թ.

Ուժի մեջ է

04.12.2025թ.

Հղում

<https://www.arlis.am/hy/acts/217374/latest>

Համառոտ նկարագիր

ՀՀ հարկային օրենսգրքում կատարված փոփոխությունների և լրացման արդյունքում՝

1. սահմանվել է, որ ոչ ռեզիդենտ կազմակերպության վարձած աշխատողներին Հայաստանի Հանրապետության տարածքում կատարվող աշխատանքների և (կամ) մատուցվող ծառայությունների դիմաց վճարվող եկամուտները համարվում են Հայաստանի Հանրապետության աղբյուրներից ստացվող եկամուտներ, եթե վճարվող եկամուտները ոչ ռեզիդենտ կազմակերպության Հայաստանի Հանրապետությունում հաշվառված մշտական հաստատության համար համարվում են ծախս և (կամ) աշխատողները ներգավված են մշտական հաստատության գործունեության մեջ,

2. պարզեցվել և ավտոմատացվել է Հայաստանի Հանրապետության հարկային ռեզիդենտի կարգավիճակի հաստատման մասին տեղեկանքի տրամադրման գործընթացը:

13. Փաստաթուղթ

««Մաքսային կարգավորման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք

Ամսաթիվը և համարը

13.11.2025թ. ՀՕ-379-Ն

Հրապարակումը

04.12.2025թ.

Ուժի մեջ է

Պաշտոնական հրապարակման օրն ընդգրկող ամսվան հաջորդող 7-րդ ամսվա 1-ին օրը, բայց ոչ շուտ, քան օրենքի 4-րդ հոդվածով նախատեսված համակարգի գործարկման օրը

Համառոտ նկարագիր

«Մաքսային կարգավորման մասին» օրենքի փոփոխությունները վերաբերում են.

- մաքսային միասնական հաշվի համակարգի ներդրմանը, կիրառվող հասկացությունների փոփոխությանը և լրացմանը,
- մաքսային միասնական հաշվի կանխավճարների համալրման աղբյուրների սահմանմանը, համալրման կարգին և կանխավճարների օգտագործմանը,
- մաքսային պարտավորությունների վճարման ժամկետների նախանշմանը,
- մաքսային պարտավորությունների՝ կանխավճարներից վճարման կարգին, այդ թվում իրավաբանական անձանց լուծարման կամ վերակազմակերպման դեպքերում առանձնահատկություններին,
- ավել վճարված մաքսային պարտավորությունների գումարների վերադարձին՝ այդ թվում մաքսային միասնական հաշվի միջոցով:

14. Փաստաթուղթ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք

Ամսաթիվը և համարը

13.11.2025թ. ՀՕ-382-Ն

Հրապարակումը

04.12.2025թ.

Ուժի մեջ է

01.01.2026թ.

Հղում

<https://www.arlis.am/hy/acts/217453/latest>

Համառոտ նկարագիր

Կատարված փոփոխությունների և լրացման արդյունքում ակցիզային դրոշմանիշերով կամ դրոշմապիտակներով կամ հսկիչ (նույնականացման) նշաններով դրոշմավորման ենթակա չդրոշմավորված ապրանքներ օտարելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով սահմանված պատասխանատվության շրջանակներում որոշակիացվել են խախտում համարվող արարքները և ավելացվել են գործող տուգանքների չափերը՝ կիրառելով առավել խիստ վարչական պատասխանատվության միջոցներ: Մասնավորապես, խախտում համարվող արարքների կանխարգելման և վարչական պատասխանատվության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ ծխախոտի արտադրանքի և խմիչքների (սպիրտի) դեպքերի համար որպես լրացուցիչ վարչական տույժի տեսակ՝ կկիրառվեն վարչական իրավախախտման անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի բռնագրավման վերաբերյալ կարգավորումներ:

15. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք

Ամսաթիվը և համարը	13.11.2025թ. ՀՕ-383-Ն
Հրապարակումը	04.12.2025թ.
Ուժի մեջ է	01.01.2026թ.
Հղում	https://www.arlis.am/hy/acts/217448/latest

Համառոտ նկարագիր

ՀՀ քրեական օրենսգրքի 289-րդ հոդվածը լրացվել է «հսկիչ (նույնականացման) նշաններով» նոր եզրույթով, ինչը պայմանավորված է ՀՀ հարկային օրենսգրքի 396.1 հոդվածի կարգավորումներով և Եվրասիական տնտեսական խորհրդի կողմից 05.03.2021 թվականին կայացված թիվ 19 որոշման կայացմամբ, որով հաստատվել է Եվրասիական տնտեսական միությունում նույնականացման միջոցներով ապրանքների դրոշմավորման համակարգի հիմնական տեխնոլոգիական կազմակերպչական մոդելը:

16. Փաստաթուղթ	««Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	13.11.2025թ. ՀՕ-386-Ն
Հրապարակումը	09.12.2025թ.
Ուժի մեջ է	19.12.2025թ.
Հղում	https://www.arlis.am/hy/acts/217641/latest

Համառոտ նկարագիր

«Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքում կատարված փոփոխության արդյունքում լիցենզիայի տրամադրման պետական տուրքը բազային տուրքի 29-ապատիկի փոխարեն սահմանվել է 55-ապատիկի չափով:

17. Փաստաթուղթ	««Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	13.11.2025թ. ՀՕ-390-Ն
Հրապարակումը	09.12.2025թ.
Ուժի մեջ է	01.06.2027թ.
Հղում	https://www.arlis.am/hy/acts/217646/latest

Համառոտ նկարագիր

«Անկանխիկ գործառնությունների մասին» 2022 թվականի հունվարի 18-ի ՀՕ-12-Ն օրենքում կատարված փոփոխության և լրացման արդյունքում սահմանվել է, որ Հայաստանի Հանրապետության տարածքում անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից 2022 թվականի հուլիսի 1-ից 300,000 Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ապրանքների օտարման, գույքի օտարման, ապրանքների օգտագործման, գույքի օգտագործման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման (բացառությամբ ռիելթորական ծառայությունների), Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված պասիվ եկամուտների վճարման, փոխառությունների տրամադրման և ստացման գործարքների դիմաց, եթե դրանց մի կողմը ֆիզիկական անձ է, վճարումը և վճարի ստացումն իրականացվում են անկանխիկ ձևով՝ անկախ վճարման կարգից, եթե սույն օրենքով և այլ օրենքներով այդ գործարքների դիմաց վճարման ավելի ցածր սահմանաչափեր և այլ բացառություններ նախատեսված չեն: Բացառություն են կազմում նաև օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց կողմից մանրածախ առևտրում սահմանված կարգով դուրս գրված՝ ԱԱՀ-ի վերադարձի հարկային հաշվով ձևակերպված ապրանքների ձեռքբերման գործարքները, որոնց դիմաց Հայաստանի Հանրապետության տարածքում կանխիկ դրամով գումարի ընդունման առավելագույն չափը չի կիրառվում:

Միաժամանակ, սահմանվել է, որ ռիելթորական ծառայությունների մատուցման վճարների ընդունումն իրականացվում է անկանխիկ ձևով: Գույքի կառավարումից ստացված եկամուտների փոխանցումը սեփականատիրոջն իրականացվում է անկանխիկ ձևով:

18. Փաստաթուղթ
Ամսաթիվը և համարը
Հրապարակումը
Ուժի մեջ է
Հղում

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
 13.11.2025թ. ՀՕ-391-Ն
 09.12.2025թ.
 01.06.2027թ.
<https://www.arlis.am/hy/acts/217643/latest>

Համառոտ նկարագիր

Օրենքով կատարված փոփոխությունների արդյունքում սահմանվել է, որ.

- «Ռիելթորական գործունեության մասին» օրենքի իմաստով անշարժ գույքի սեփականատիրոջ կողմից անշարժ գույքի կառավարման հանձնված անշարժ գույքի հետ կապված գործարքներից ստացվող անշարժ գույքի սեփականատիրոջ եկամուտների մասով եկամտային հարկը հաշվարկվում է 10% դրույքաչափով, իսկ հարկային տարվա ընթացքում ստացված անշարժ գույքի կառավարման հանձնված անշարժ գույքի հետ կապված գործարքներից ստացվող եկամուտների հանրագումարը 60 միլիոն դրամը գերազանցելու դեպքում գերազանցող մասի համար ֆիզիկական անձը հաշվարկում է լրացուցիչ եկամտային հարկ՝ 10% դրույքաչափով,

- ռիելթորական, անշարժ գույքի կառավարման ծառայություններ մատուցողները չեն կարող համարվել միկրոձեռնարկատիրության սուբյեկտներ,

- հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի կիրառության իմաստով՝ ձեռնարկատիրական գործունեություն չի համարվում «Ռիելթորական գործունեության մասին» օրենքի իմաստով անշարժ գույքի սեփականատիրոջ կողմից անշարժ գույքը կառավարման հանձնելը:

19. Փաստաթուղթ	««Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	13.11.2025թ. ՀՕ-393-Ն
Հրապարակումը	09.12.2025թ.
Ուժի մեջ է	01.11.2026թ.
Հղում	https://www.arlis.am/hy/acts/217644/latest

Համառոտ նկարագիր

«Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքում կատարված լրացումների արդյունքում սահմանվել են պետական տուրքի գանձման հետևյալ դրույքաչափերը՝

1. ռիելթորի որակավորման քննությանը մասնակցելու համար՝ բազային տուրքի 30-ապատիկի չափով,
2. ռիելթորի որակավորման վկայականը վերաձևակերպելու համար՝ բազային տուրքի եռապատիկի չափով,
3. «Ռիելթորական գործունեության մասին» օրենքով նախատեսված միասնական տեղեկատվական համակարգի միջոցով անշարժ գույքի վերաբերյալ տվյալների մուտքագրման համար՝
 - ֆիզիկական անձանց համար (յուրաքանչյուր անշարժ գույքի միավորի համար)՝ բազային տուրքի չափով,
 - ռիելթորական, անշարժ գույքի կառավարման կազմակերպությունների, անհատ ձեռնարկատեր հանդիսացող ռիելթորների և անշարժ գույքի կառավարիչների համար (յուրաքանչյուր տարվա համար)՝ բազային տուրքի 450-ապատիկի չափով,
4. «Ռիելթորական գործունեության մասին» օրենքով նախատեսված միասնական տեղեկատվական համակարգի հետ անշարժ գույքի վաճառքի կայքերի փոխգործելիության ապահովման համար (յուրաքանչյուր տարվա համար)՝ բազային տուրքի 500-ապատիկի չափով:

20. Փաստաթուղթ	««Եվրասիական տրանսպորտային միջանցքներում ներառված՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկող տրանսպորտային միջոցների թույլատրելի զանգվածների, սոնիների բեռնվածքի և եզրաչափերի մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	04.12.2025թ. ՀՕ-400-Ն
Հրապարակումը	10.12.2025թ.
Ուժի մեջ է	11.12.2025թ.

Համառոտ նկարագիր

Օրենքով վավերացվել է 2024 թվականի դեկտեմբերի 13-ին ստորագրված՝ «Եվրասիական տրանսպորտային միջանցքներում ներառված՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկող տրանսպորտային միջոցների թույլատրելի զանգվածների, սոնիների բեռնվածքի և եզրաչափերի մասին» համաձայնագիրը:

21. Փաստաթուղթ	««Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	04.12.2025թ. ՀՕ-406-Ն
Հրապարակումը	19.12.2025թ.
Ուժի մեջ է	29.12.2025թ.
Հղում	https://www.arlis.am/hy/acts/218358/latest

Համառոտ նկարագիր

«Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքում կատարված փոփոխության արդյունքում դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են հայցվորները՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.2-րդ հոդվածով նախատեսված դեպքերում՝ հիմնարար իրավունքների խախտման և անարդարացի դատապարտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի հատուցման վերաբերյալ հայցերով, եթե նախաքննության մարմինը, դատախազը կամ դատարանը հաստատել է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության կամ անգործության հետևանքով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 162.1-ին հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմնարար իրավունքի խախտման փաստը, և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.3-րդ հոդվածով նախատեսված դեպքերում՝ խոշտանգման հետևանքով պատճառված նյութական վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով:

22. Փաստաթուղթ	«Պետական տուրքի և պետական տուրքի համար կիրառված տույժերի համաներման մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	04.12.2025թ. ՀՕ-407-Ն
Հրապարակումը	19.12.2025թ.
Ուժի մեջ է	29.12.2025թ.
Հղում	https://www.arlis.am/hy/acts/218361/latest

Համառոտ նկարագիր

Օրենքով կարգավորում է ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիայի համար պետական տուրքի գծով պարտավորություններ ունեցող ֆիզիկական անձանց նկատմամբ համաներման հետ կապված հարաբերությունները:

23. Փաստաթուղթ	««Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	04.12.2025թ. ՀՕ-441-Ն
Հրապարակումը	23.12.2025թ.
Ուժի մեջ է	01.01.2026թ.
Հղում	https://www.arlis.am/hy/acts/218523/latest

Համառոտ նկարագիր

«Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքում կատարված լրացումների և փոփոխության արդյունքում սահմանվել է, որ «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհատական և հրապարակային ծանուցումների համար պետական տուրքը գանձվում է անհատական ծանուցման համար հետևյալ դրույքաչափերով՝

1. տեքստի դեպքում՝ յուրաքանչյուր տպագրական նիշի համար՝ 0.05 դրամ, բայց ոչ պակաս 50 դրամից և ոչ ավելի 250 դրամից,
2. էլեկտրոնային փաստաթղթի դեպքում՝ յուրաքանչյուր կիլոբայթի համար՝ 0.5 դրամ, բայց ոչ պակաս 100 դրամից և ոչ ավելի 500 դրամից,
3. Հրապարակային ծանուցման համար՝ յուրաքանչյուր տպագրական նիշի համար՝ 10 դրամ, բայց ոչ պակաս 2000 դրամից և ոչ ավելի 100000 դրամից, իսկ «Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հաշվետվության հրապարակման համար՝ ոչ ավելի 5000 դրամից:

Միաժամանակ, եթե անհատական ծանուցումը միաժամանակ և՛ տեքստ, և՛ էլեկտրոնային փաստաթուղթ է պարունակում, ապա պետական տուրքը գանձվում է դրանցից յուրաքանչյուրի համար հաշվարկված պետական տուրքերի հանրագումարի չափով:

24. Փաստաթուղթ	«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	17.12.2025թ. ՀՕ-459-Ն
Հրապարակումը	24.12.2025թ.
Ուժի մեջ է	25.12.2025թ.
Հղում	https://www.arlis.am/hy/acts/218650/latest

Համառոտ նկարագիր

«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ սահմանվել են, ապահովագրավճար վճարողների շրջանակը, դրույքաչափերը, վճարման ժամկետները, մասնավորապես՝

1. 2025 թվականի նոյեմբեր ամսվա համար 2025 թվականի դեկտեմբերի 25-ի դրությամբ հարկային մարմին ներկայացված եկամտային հարկի ամսական (պարզեցված) հաշվարկներով յուրաքանչյուր գործատուից 200.001 ՀՀ դրամ և ավելի աշխատավարձ ունեցող վարձու աշխատողների համար (որոնց աշխատավարձը հաշվարկում է հարկային գործակալը կամ հարկային գործակալի պարտավորությունից ազատված գործատուն) օրենքն ուժի մեջ է մտնում 25.12.2025թ.-ից և տարածվում է 2025 թվականի դեկտեմբեր ամսվա և դրան հաջորդող ամիսների աշխատավարձի վրա:

2026 թվականի հունվար ամսից մինչև նոյեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում յուրաքանչյուր գործատուից 200.001 ՀՀ դրամ և ավելի աշխատավարձ ունեցող վարձու աշխատողների (որոնց աշխատավարձը հաշվարկում է հարկային գործակալը կամ հարկային գործակալի պարտավորությունից ազատված գործատուն) մասով օրենքն ուժի մեջ է մտնում այդ ամսվան հաջորդող ամսվա 1-ից և տարածվում է այդ ամսվան հաջորդող ամսվա և դրան հաջորդող ամիսների աշխատավարձի վրա:

Վերոնշյալ ապահովագրավճար վճարող անձանց համար 2025 թվականի դեկտեմբեր ամսվա և հաջորդող տարվա համար վճարման ենթակա են՝

- օրենքով սահմանված ապահովագրավճարի ամսական դրույքաչափից 4.800 ՀՀ դրամը, եթե անձի աշխատավարձը, ըստ յուրաքանչյուր գործատուի, կազմում է մինչև 500.000 ՀՀ դրամ: Ընդ որում, ՀՀ պետական բյուջեից ֆինանսների բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը Հիմնադրամի գանձապետական հաշվին է փոխանցում 6000 ՀՀ դրամ՝ նշված անձանց համար (բացառությամբ սոցիալական փաթեթի շահառու հանդիսացող անձանց),

- օրենքով սահմանված ապահովագրավճարի ամսական դրույքաչափի հարյուր տոկոսը՝ 10.800 ՀՀ դրամ, եթե անձի աշխատավարձի չափը 500.001 ՀՀ դրամ և ավելի է:

Ընդ որում, 2025 թվականի դեկտեմբեր ամսվա և հաջորդող տարվա համար սոցիալական փաթեթի շահառու հանդիսացող ապահովագրված անձինք ապահովագրված անձի կարգավիճակի առկայության ամբողջ ժամանակահատվածի համար (կարգավիճակն ստանալուց հետո՝ 12 ամսվա ընթացքում) պարտավոր են վճարել ամսական 6000 դրամ ինքնուրույն, եթե աշխատավարձի չափը ապահովագրավճարի հաշվարկման ամսում կազմել է մինչև 500.000 ՀՀ դրամ:

2. 2025 թվականի համար ներկայացված միկրոձեռնարկատիրության սուբյեկտի իրացման շրջանառության վերաբերյալ հաշվետվության և (կամ) շրջանառության հարկի հաշվարկներում և (կամ) շահութահարկի հաշվարկում 2.400.001 ՀՀ դրամ և ավելի համախառն եկամուտ (իրացման շրջանառություն) հայտարարագրած՝ ՀՀ-ում հաշվառված անհատ ձեռնարկատերերի, նոտարների համար օրենքն ուժի մեջ է մտնում 01.01.2026թ.-ից: Նշված անձանց մասով 2026 թվականի համար վճարման ենթակա է ապահովագրավճարի տարեկան դրույքաչափի հարյուր տոկոսը՝ 129.600 ՀՀ դրամ:

25. Փաստաթուղթ
Ամսաթիվը և համարը
Հրապարակումը
Ուժի մեջ է
Հղում

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
17.12.2025թ. ՀՕ-471-Ն
24.12.2025թ.
25.12.2025թ.
<https://www.arlis.am/hy/acts/218638/latest>

Համառոտ նկարագիր

ՀՀ հարկային օրենսգրքում կատարված լրացումների արդյունքում, սահմանվել է, որ՝

1. առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամը չի համարվում շահութահարկ վճարող,
2. ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով ՀՀ-ում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի հարկման բազայի որոշման նպատակով ծախս են համարվում նաև «Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքով սահմանված՝ առողջության համընդհանուր ապահովագրության շրջանակում ֆիզիկական անձանց կամ նրանց փոխկապակցված անձանց համար (օգտին) կատարվող ապահովագրավճարները,
3. եկամտային հարկով հարկման բազան որոշելու նպատակով նվազեցվող (չհարկվող) եկամուտներ են համարվում նաև «Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքով սահմանված՝ առողջության համընդհանուր ապահովագրության շրջանակում ֆիզիկական անձանց կամ նրանց փոխկապակցված անձանց համար (օգտին) կատարվող ապահովագրավճարները:

26. Փաստաթուղթ

««Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք

Ամսաթիվը և համարը
Հրապարակումը
Ուժի մեջ է
Հղում

17.12.2025թ. ՀՕ-477-Ն
24.12.2025թ.
25.12.2025թ.
<https://www.arlis.am/hy/acts/218648/latest>

Համառոտ նկարագիր

Օրենքով կատարված փոփոխությունների արդյունքում, սահմանվել է, որ՝

1. հարկային գործակալից կամ ՀՀ-ի անունից կնքված և վավերացված պայմանագրերի դրույթների համաձայն՝ հարկային գործակալի պարտավորությունից ազատված անձից եկամուտ ստացող անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձինք դրոշմանիշային վճարը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար վճարում են հետևյալ դրույքաչափերով՝

- մինչև 1.000.000 դրամ հաշվարկման բազայի դեպքում՝ 1.000 դրամ,
- 1.000.001 դրամ և ավելի հաշվարկման բազայի դեպքում՝ 15.000 դրամ,

2. անհատ ձեռնարկատերերը, նոտարները, ինչպես նաև հարկային գործակալ չհանդիսացողից եկամուտ ստացող անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձինք դրոշմանիշային վճարը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար վճարում են հետևյալ դրույքաչափերով՝

- մինչև 12.000.000 դրամ հաշվարկման բազայի դեպքում՝ 12.000 դրամ,
- 12.000.001 դրամ և ավելի հաշվարկման բազայի դեպքում՝ 120.000 դրամ:

Օրենքն ուժի մեջ է մտնում 2026թ. հունվարի 1-ից, բացառությամբ 200.001 ՀՀ դրամ և ավել աշխատավարձ ստացող վարձու աշխատողների, որոնց համար օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից (25.12.2025թ.-ից) և տարածվում է 2025 թվականի դեկտեմբերի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

27. Փաստաթուղթ
Ամսաթիվը և համարը
Հրապարակումը
Ուժի մեջ է
Հղում

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
17.12.2025թ. ՀՕ-487-Ն
29.12.2025թ.
01.01.2026թ.
<https://www.arlis.am/hy/acts/218993/latest>

Համառոտ նկարագիր

Օրենսգրքում կատարված լրացումների արդյունքում, ԱԱՀ-ից ազատվում է՝

1. 2026թ. հունվարի 1-ից մինչև 2026թ. հունվարի 31-ը ներառյալ՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8702 40 000, 8703 80 000, 8704 60 000 և 8711 60 ծածկագրերին դասվող էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների ՀՀ տարածք ներմուծումը կամ օտարումը,

2. 2026թ. փետրվարի 1-ից մինչև 2026թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ՝ 2023թ. դեկտեմբերի 31-ից հետո թողարկված ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8702 40 000, 8703 80 000, 8704 60 000 և 8711 60 ծածկագրերին դասվող էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների ՀՀ տարածք ներմուծումը կամ օտարումը:

28. Փաստաթուղթ

««Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2024 թվականի փետրվարի 28-ի ՀՕ-104-Ն օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք

Ամսաթիվը և համարը	17.12.2025թ. ՀՕ-496-Ն
Հրապարակումը	29.12.2025թ.
Ուժի մեջ է	01.01.2026թ.
Հղում	https://www.arlis.am/hy/acts/219026/latest

Համառոտ նկարագիր

Օրենքով փոփոխություն է կատարվել 2024 թվականի փետրվարի 28-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-104-Ն օրենքի 10-րդ հոդվածում մասնավորապես՝ չվճարված հարկային պարտավորությունների կատարումն ապահովող արգելադրման նոր գործիքակազմի ներդրման և գործարկման ժամկետը 2026 թվականի հունվարի 1-ի փոխարեն սահմանվել է 2026 թվականի հուլիսի 1-ը:

29. Փաստաթուղթ	««Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» 2024 թվականի փետրվարի 28-ի ՀՕ-107-Ն օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	17.12.2025թ. ՀՕ-498-Ն
Հրապարակումը	29.12.2025թ.
Ուժի մեջ է	01.01.2026թ.
Հղում	https://www.arlis.am/hy/acts/219037/latest

Համառոտ նկարագիր

Օրենքով փոփոխություն է կատարվել 2024 թվականի փետրվարի 28-ի ««Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-107-Ն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասում մասնավորապես՝ չվճարված հարկային պարտավորությունների կատարումն ապահովող արգելադրման նոր գործիքակազմի ներդրման և գործարկման ժամկետը 2026 թվականի հունվարի 1-ի փոխարեն սահմանվել է 2026 թվականի հուլիսի 1-ը:

30. Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հուլիսի 3-ի N 905-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	09.10.2025թ. N 1428-Ն
Հրապարակումը	09.10.2025թ.
Ուժի մեջ է	10.10.2025թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ փոփոխություններ են կատարվել ՀՀ կառավարության 2025 թվականի հուլիսի 3-ի «2025 թվականի ընթացքում Իրանի Իսլամական Հանրապետությունից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող իրանական ծագում ունեցող առանձին տեսակի ապրանքների նկատմամբ սակագնային քվոտա կիրառելու, ներմուծման թույլատրելի ծավալի բաշխման ընթացակարգը սահմանելու, մեկանգամյա և գլխավոր լիցենզիաների ձևերը հաստատելու մասին» N 905-Ն որոշման մեջ, որոնց արդյունքում լուրջ մաժուկի սակագնային քվոտայով հատկացված 365 տոննա ծավալի համար ներմուծման լիցենզիայի գործողության ժամկետը սահմանվել է ս.թ. հոկտեմբերի 16-ից մինչև ս.թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ:

31. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունվարի 14-ի N 35-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

30.10.2025թ. N 1516-Ն

Հրապարակումը

30.10.2025թ.

Ուժի մեջ է

31.12.2025թ.

Հղում

<https://www.arlis.am/hy/acts/215701/latest>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ փոփոխություն է կատարվել ՀՀ կառավարության 2021 թվականի հունվարի 14-ի «Ռազմավարական տեսակետից կարևոր հումքային ապրանքների և մշակութային արժեքների ցանկը հաստատելու մասին» թիվ 35-Ն որոշմամբ հաստատված հավելվածում, որի արդյունքում 11-րդ կետը շարադրվել է նոր խմբագրությամբ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նույն կետում հղում կատարված Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հուլիսի 16-ի թիվ 54 որոշումը 01.01.2022թ. ուժը կորցրած է ճանաչվել և նույն ամսաթվից գործում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2021 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ 80 որոշումը:

32. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետությունից մի շարք ապրանքների՝ դեպի Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ տեղափոխման և երրորդ երկրներ արտահանման ժամանակավոր արգելք կիրառելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

30.10.2025թ. N 1518-Ն

Հրապարակումը

30.10.2025թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ տեղափոխման և երրորդ երկրներ արտահանման ժամանակավոր արգելք՝

1. ԱՏԳ ԱԱ 7201, 7204, 7303 00, 7304, 7305, 7306, 7307, 7308 ծածկագրերին դասվող (իսկ 7302 ծածկագրից՝ օգտագործված ռելսերի, 7325 և 7326 ծածկագրերից՝ օգտագործված սալիկների և օգտագործված աղացագնդերի, 7322 ծածկագրից՝ օգտագործված թուջե ռադիատորների) ապրանքների վրա,

2. ԱՏԳ ԱԱ 7404 00, 7503 00, 7602 00, 7802 00 000, 7902 00 000, 8002 00 000, 8101 97 000, 8102 97 000, 8103 30 000, 8104 20 000, 8105 30 000, 8106, 8112 61 00, 8108 30 000, 8109 3, 8110 20 000, 8111 00 190, 8112 13 000, 8112 22 000, 8112 31 000 0, 8112 41 000 1, 8112 52 000, 8112 92 210, 8113 00 400 ծածկագրերին դասվող գունավոր մետաղի թափոնների և ջարդոնի վրա,

3. ԱՏԳ ԱԱ 8415-8417, 8419-8421, 8425-8426, 8428, 8435, 8438, 8449 00 000 0, 8454-8466, 8474-8475, 8477, 8481, 8482-8484, 8487, 8502-8504, 8507, 8514, 8516, 8544, 8549 ծածկագրերին դասվող օգտագործված կամ սպառված կամ թափոն և ջարդոն հանդիսացող ապրանքների վրա:

Միաժամանակ, արգելքը չի տարածվում՝

1. «Ժամանակավոր ներմուծում», «Վերամշակում՝ մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգերով ձևակերպված և հետագայում վերաարտահանվող, Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից ժամանակավոր օգտագործման նպատակով պայմանագրի հիման վրա Հայաստանի Հանրապետություն տեղափոխված և հետագայում վերադարձման ենթակա, Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն տեղափոխված սույն որոշման 1-ին կետով հաստատված այն ապրանքների վրա, որոնք փոխադրման (մատակարարման) գործարքի պայմանները (այդ թվում՝ որակի, երաշխիքի պայմանները) չկատարելու պատճառով Հայաստանի Հանրապետությունից վերադարձվում են գործարքի շրջանակներում վերանորոգման (կամ փոխարինման) համար՝ դրանք վերադարձնելու պայմանով, իսկ սույն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված ապրանքներից «Ժամանակավոր արտահանում» և «Վերամշակում՝ մաքսային տարածքից դուրս» մաքսային ընթացակարգերով արտահանվող և հետագայում ներմուծվող, իսկ ԱՏԳ ԱԱ 7308 ծածկագրից՝ 7308 40 ծածկագրին դասվող սև մետաղից բեմային կոնստրուկցիաների՝ «Ժամանակավոր արտահանում» ընթացակարգով արտահանվող և հետագայում ներմուծվող, ԱՏԳ ԱԱ 7308 90 ծածկագրին դասվող սև մետաղից չօգտագործված մետաղակոնստրուկցիաների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում արտադրված՝ սույն որոշման 1-ին կետում նշված ԱՏԳ ԱԱ ծածկագրերին դասվող (բացառությամբ ԱՏԳ ԱԱ 7201, 7204 ծածկագրերին դասվող ապրանքների, 7302 ծածկագրից՝ օգտագործված ռելսերի, 7325 և 7326 ծածկագրերից՝ օգտագործված սալիկների և օգտագործված աղացագնդերի, 7322 ծածկագրից՝ օգտագործված թուջե ռադիատորների և սույն որոշման 1-ին կետի 2-րդ և 3-րդ ենթակետերում նշված ԱՏԳ ԱԱ ծածկագրերին դասվող ապրանքների) ապրանքների վրա,

2. ԱՏԳ ԱԱ ծածկագրերին դասվող և ֆիզիկական անձանց կողմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի փետրվարի 13-ի N 171-Ն որոշման N 1 հավելվածով սահմանված ակնհայտ առևտրային չափաքանակները չգերազանցող անձնական օգտագործման ապրանքների՝ Հայաստանի Հանրապետությունից արտահանման կամ դրանց տարանցիկ փոխադրման վրա,

3. քաղաքացիական օդանավերի և երկաթուղային տրանսպորտի շահագործման համար նախատեսված ապրանքների վրա:

33. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հունվարի 25-ի N 113-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

30.10.2025թ. N 1523-Ն

Հրապարակումը

30.10.2025թ.

Ուժի մեջ է

31.10.2025թ.

Հղում

<https://www.arlis.am/hy/acts/215703/latest>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ փոփոխություն է կատարվել ՀՀ կառավարության «Անհաղթահարելի ուժով՝ արտակարգ և տվյալ պայմաններում անկանխելի հանգամանքներով պայմանավորված ակտիվի սկզբնական արժեքի որոշման և ծախսերի փաստաթղթավորման կարգը, հարկերի կամ հարկման բազայի նվազեցման կարգը, չափերը և ժամանակահատվածը սահմանելու մասին» N 113-Ն որոշման N1 հավելվածում, որի արդյունքում 9-րդ կետով նախատեսված՝ նույն հավելվածով սահմանված հարկային արտոնություններից օգտվելու համար մշտական հաստատության կողմից հարկային մարմին համապատասխան դիմումներ ներկայացնելու ժամկետը հետաձգվել է մինչև 2025թ. դեկտեմբերի 31-ը՝ 2024թ. հունիսի 30-ի փոխարեն:

34. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հունիսի 8-ի N 922-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

30.10.2025թ. N 1530-Ն

Հրապարակումը

31.10.2025թ.

Ուժի մեջ է

01.11.2025թ.

Հղում

<https://www.arlis.am/hy/acts/215766/latest>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ լրացումներ և փոփոխություն է կատարվել ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 8-ի «Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց հարկային մարմնում հաշվառման պարզեցված կարգը սահմանելու մասին» N 922-Ն որոշման մեջ, որոնց

արդյունքում սահմանվել է, որ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից ֆիզիկական անձանց էլեկտրոնային ծառայությունների միասնական համակարգում մինչև նույնականացման գործընթացի ավարտը համաձայնության տրման դեպքում հարկային մարմնի տեղեկատվական համակարգը այդ անձանց ինքնաշխատ շնորհում է ՀՎՀՀ, իսկ ՀՀ հարկային օրենսգրքի 156-րդ հոդվածի 4.1-ին մասով սահմանված՝ եկամտային հարկի տարեկան հաշվարկի (հայտարարագրի) ներկայացման համար անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց հարկային մարմինը ինքնաշխատ եղանակով շնորհում է ՀՎՀՀ:

35. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 3-ի N 202-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

06.11.2025թ. N 1563-Ն

Հրապարակումը

06.11.2025թ.

Ուժի մեջ է

07.11.2025թ.

Հղում

<https://www.arlis.am/hy/acts/216074/latest>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 3-ի «Պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների շահույթի բաշխման, շահութաբաժինների հաշվարկման և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 5-ի N 1194 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 202-Ն որոշման մեջ, որոնց արդյունքում՝

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից սակագնային կարգավորման ենթակա էներգետիկայի բնագավառի 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների համար շահութաբաժինների հաշվարկման բազա է ընդունվում հաշվետու տարվա համար յուրաքանչյուր առևտրային կազմակերպության գործունեության արդյունքում պլանավորված և հանձնաժողովի կողմից հաստատված սակագնի հաշվարկում ներառված՝ տարեկան շահույթի մեծությունը:

2. Առանձին առևտրային կազմակերպությունների համար շահութաբաժնի սահմանված չափը (տոկոսը) կարող է փոփոխվել, ինչպես նաև շահութաբաժնի պարտավորության վճարման ժամկետը կարող է հետաձգվել Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

3. Շահութաբաժնի սահմանված չափի փոփոխման (շահութաբաժնի վճարումից ազատման, չափի նվազեցման կամ ավելացման), ինչպես նաև շահութաբաժնի պարտավորության վճարման ժամկետը հետաձգելու վերաբերյալ առևտրային կազմակերպությունների առաջարկությունները լիազորված մարմինները սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարություն են ներկայացնում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության եզրակացությամբ՝ նշված առաջարկություններին կցելով՝ շահութաբաժնի սահմանված չափի փոփոխման, ինչպես նաև շահութաբաժնի պարտավորության վճարման ժամկետը հետաձգելու վերաբերյալ ֆինանսատնտեսական հիմնավորումները (հաշվարկները) և խորհրդի (դրա առկայության դեպքում)՝ ընդհանուր ժողովին ուղղված առաջարկությունը:

36. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 9-ի N 1251-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

06.11.2025թ. N 1565-Ն

Հրապարակումը

06.11.2025թ.

Ուժի մեջ է

07.02.2026թ.

Հղում

<https://www.arlis.am/hy/acts/216071/latest>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ փոփոխություն է կատարվել ՀՀ կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 9-ի «Պետական գրանցման ենթակա տրանսպորտային միջոցների տեսակների ցանկը, տրանսպորտային միջոցների պետական հաշվառման կարգը, պետական գրանցման և պետական հաշվառման համար պարտադիր ներկայացվող փաստաթղթերի ցանկերը, տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի, պետական հաշվառման ազգային ու միջազգային վկայագրերի և «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ընթացակարգով Հայաստանի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցների հաշվառման վկայագրի ձևերը, «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ընթացակարգով Հայաստանի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցների հաշվառման կարգը, հաշվառման համարանիշերին ներկայացվող պահանջները, ինչպես նաև տրանսպորտային միջոցների համարանիշերի հաշվառման ու հատկացման կարգը սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 30-ի N 1853-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի N 1041-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1251-Ն որոշման մեջ, որի արդյունքում սահմանվել է, որ ներկայիս 4 կՎտ-ից ավելի հզորությամբ էլեկտրական շարժիչ և 50 կմ/ժ-ից ավելի առավելագույն արագություն զարգացնելու հնարավորություն ունենալու տեխնիկական տվյալները փոխարինվել են 0.25 կՎտ-ից ավելի հզորությամբ էլեկտրական շարժիչ և 25 կմ/ժ-ից ավելի առավելագույն արագություն զարգացնելու հնարավորություն ունենալու տեխնիկական տվյալներով:

37. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 1524-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

14.11.2025թ. N 1591-Ն

Հրապարակումը

14.11.2025թ.

Ուժի մեջ է

24.11.2025թ.

Հղում

<https://www.arlis.am/hy/acts/216500/latest>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ փոփոխություն է կատարվել ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված և սահմանափակումների ենթակա ապրանքների ցանկերը հաստատելու, լիազոր մարմիններ սահմանելու և ապրանքների արտահանման և (կամ) ներմուծման լիցենզիաների ու թույլտվությունների տրամադրման շրջանակային կարգը հաստատելու մասին» N 1524-Ն որոշման մեջ, որի արդյունքում նախատեսվել է, որ լիցենզիաների կատարման վերաբերյալ տեղեկատվությունը լիցենզիան տրամադրող լիազոր պետական մարմիններին կներկայացվեն վերջիններիս կողմից հարցման իրականացման դեպքում՝ ներկայումս պարբերական տրամադրման փոխարեն:

38. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետությունից երկաթի և չլեգիրված պողպատի, երկաթից կամ չլեգիրված պողպատից կիսապատրաստուկների, լեգիրված ձուլակտորներով կամ այլ սկզբնական ձևերով պողպատի, զտված պղնձի և չմշակված պղնձային համաձուլվածքների, չմշակված ալյումինի, ալյումինի փոշիների և թեփուկների՝ դեպի երրորդ երկրներ արտահանման ժամանակավոր սահմանափակում կիրառելու, արտահանման լիցենզիայի տրամադրման կարգն ու պայմանները և հիմնական լիցենզիայի ձևը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

20.11.2025թ. N 1643-Ն

Հրապարակումը

21.11.2025թ.

Ուժի մեջ է

03.01.2026թ.

Հղում

<https://www.arlis.am/hy/acts/216826/latest>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է, որ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 7206՝ երկաթ և չլեգիրված պողպատ՝ ձուլակտորներով կամ այլ սկզբնական ձևերով (բացի 7203 ապրանքային դիրքի երկաթից), 7207՝ երկաթից կամ չլեգիրված պողպատից կիսապատրաստուկներ, 7224՝ այլ պողպատ՝ լեգիրված ձուլակտորներով կամ այլ սկզբնական ձևերով, կիսապատրաստուկներ այլ լեգիրված պողպատից, 7403՝ զտված պղնձ և չմշակված պղնձային համաձուլվածքներ, 7601՝ չմշակված ալյումին, 7603՝ ալյումինի փոշիներ և թեփուկներ ապրանքային դիրքի ծածկագրերին դասվող ապրանքների արտահանումը դեպի երրորդ (Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներ չհանդիսացող) երկրներ իրականացվում է հիմնական լիցենզիաների հիման վրա: Վերոնշյալ ապրանքների արտահանման նպատակով հիմնական լիցենզիան տրամադրվում է յուրաքանչյուր մինչև մեկ տոննայի համար: Հիմնական լիցենզիաների տրամադրման համար լիազոր մարմին է սահմանվել Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարությունը: Միաժամանակ, սահմանվել են նաև ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 7206, 7207, 7224, 7403, 7601 և 7603 ապրանքային դիրքի ծածկագրերին դասվող ապրանքների արտահանման լիցենզիայի տրամադրման կարգն ու պայմանները և հիմնական լիցենզիայի ձևը:

Վերոնշյալ կարգավորումները չեն տարածվում՝ «Ժամանակավոր ներմուծում», «Վերամշակում մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգերով ներմուծված և հետագայում վերաարտահանվող ապրանքների վրա, ինչպես նաև պայմանագրի հիման վրա Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն տեղափոխված (տեղափոխվող) և դեպի Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող պետություններ արտահանվող ապրանքների վրա:

39. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մայիսի 25-ի N 808-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

20.11.2025թ. N 1662-Ն

Հրապարակումը

24.11.2025թ.

Ուժի մեջ է

01.01.2026թ.

Հղում

<https://www.arlis.am/hy/acts/216978/latest>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ փոփոխություններ են կատարվել ՀՀ կառավարության 2023 թվականի մայիսի 25-ի «Հայաստանի Հանրապետությունից արտահանվող և Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցիկ փոխադրվող զգայուն ապրանքների ցանկը հաստատելու մասին» N 808-Ն որոշման մեջ, որոնց արդյունքում ընդլայնվել են այն ապրանքների ցանկը որոնք որոշակի վերափոխման արդյունքում կարող են հանդիսանալ որպես հսկվող ապրանքներ:

40. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի N 1442-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

27.11.2025թ. N 1702-Ն

Հրապարակումը

28.11.2025թ.

Ուժի մեջ է

29.11.2025թ.

Հղում

<https://www.arlis.am/hy/acts/217208/latest>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ փոփոխություն է կատարվել ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի «Սննդամթերքի, սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող նյութերի ներմուծման, արտահանման և տարանցիկ փոխադրման, ինչպես նաև անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքների (արտադրանքի) ներմուծման, տեղափոխման և արտահանման, ինչպես նաև պետական սահմանի

անցման կետերում մաքսային մարմինների կողմից սահմանային պետական վերահսկողության իրականացման կարգը սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 19-ի N 1228-Ն և 2005 թվականի նոյեմբերի 9-ի N 1901-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1442-Ն որոշման մեջ, որի արդյունքում Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի N 317 որոշմամբ հաստատված անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքների միասնական ցանկում՝ անկախ երրորդ երկրների կազմակերպությունների անասնաբուժական հսկողության վերցված ապրանքների արտադրություն, վերամշակում և (կամ) պահպանում իրականացնող կազմակերպությունների և անձանց ռեեստրում ընդգրկված չլինելու կամ սահմանափակված կարգավիճակի Հայաստանի Հանրապետության տարածք՝ «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով՝ մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը թույլատրվում է ներմուծել ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ՝ 0206, 0207, 0209, 0210, 0301, 0302, 0303, 0304, 0305, 0306, 0307, 0308 (բացառությամբ քաղցրահամ ջրերում բուծվող իշխանազգի, թառափազգի և կարպազգի ձկնատեսակների), 1601 00, 1602, 1604 (բացառությամբ քաղցրահամ ջրերում բուծվող թառափազգի ձկնատեսակից ստացված խավիարի), 1605 ծածկագրերի Եվրոպական միության անդամ պետություններում, Մեծ Բրիտանիայում և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունում, Իսլանդիայում, Նորվեգիայում, Շվեյցարիայում, Կանադայում, Ամերիկայի Միացյալ Նահանգներում արտադրված ապրանքները, 0202 30 500 ծածկագրի՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներում արտադրված ապրանքները, 0201 30 000, 0202 30 900 ծածկագրերի՝ Վրաստանում արտադրված ապրանքները:

41. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետություն ցեմենտի ներմուծման ժամանակավոր սահմանափակում կիրառելու, ներմուծման լիցենզավորման կարգն ու պայմանները և հիմնական լիցենզիայի ձևը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

04.12.2025թ. N 1736-Ն

Հրապարակումը

04.12.2025թ.

Ուժի մեջ է

22.01.2026թ.

Հղում

<https://www.arlis.am/hy/acts/217475/latest>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է, որ՝

1. ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 2523 (բացառությամբ ԱՏԳ ԱԱ 2523100000, 2523210000) ապրանքային դիրքի ծածկագրերին դասվող ապրանքների «Բացթողում՝ ներքին սպառման համար», «Վերամշակում՝ մաքսային տարածքում» և «Վերամշակում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգերով ներմուծումն իրականացվում է հիմնական լիցենզիաների հիման վրա,

2. վերընշված ապրանքների ներմուծման նպատակով հիմնական լիցենզիան տրամադրվում է յուրաքանչյուր մինչև հարյուր տոննայի համար:

Միաժամանակ, սահմանվել է ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 2523 (բացառությամբ 2523100000, 2523210000) ապրանքային դիրքի ծածկագրին դասվող ապրանքների «Բացթողում՝ ներքին սպառման համար», «Վերամշակում՝ մաքսային տարածքում» և «Վերամշակում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգերով ներմուծման հիմնական լիցենզիայի ձևը:

42. Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հունվարի 23-ի N 98-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	04.12.2025թ. N 1758-Ն
Հրապարակումը	05.12.2025թ.
Ուժի մեջ է	06.12.2025թ.
Հղում	https://www.arlis.am/hy/acts/217532/latest

Համառոտ նկարագիր

Որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ կառավարության 2025 թվականի հունվարի 23-ի «Արտահանման խթանման նպատակով օժանդակության տրամադրման ծրագիրը հաստատելու մասին» N 98-Ն որոշման մեջ, որոնց արդյունքում փոփոխվել է օժանդակության տրամադրման ժամկետների կատարումը:

43. Փաստաթուղթ	««Վերամշակում՝ մաքսային տարածքից դուրս» մաքսային ընթացակարգի կիրառմամբ Հայաստանի Հանրապետության տարածքից երրորդ երկրներ արտահանվող թանկարժեք մետաղների կամ թանկարժեք մետաղներով պատված մետաղների նկատմամբ քվոտա սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	04.12.2025թ. N 1764-Ն
Հրապարակումը	08.12.2025թ.
Ուժի մեջ է	09.12.2025թ.
Հղում	https://www.arlis.am/hy/acts/217627/latest

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է քվոտա «Վերամշակում՝ մաքսային տարածքից դուրս» մաքսային ընթացակարգի կիրառմամբ Հայաստանի Հանրապետության տարածքից երրորդ երկրներ արտահանվող այն թանկարժեք մետաղների կամ թանկարժեք մետաղներով պատված մետաղների (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 7106-ից, 7107 00 000 0, 7108-ից, 7109 00 000 0, 7110 և 7111 00 000 0 ծածկագրեր) նկատմամբ, որոնց վերամշակման արդյունք են հանդիսանում ոսկերչական արտադրատեսակները, վարպետների ձեռքով պատրաստված ոսկյա և արծաթյա արտադրատեսակները,

այլ արտադրատեսակները և դրանց մասերը (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 7113, 7114, 9003 19 000 1, 9021 29 000 0*, 9101**, 9102**, 9103**, 9105**, 9111**, 9112**, 9113 10 100 0, 9608 10 920 0-ից, 9608 10 990 0-ից, 9608 30 000 0-ից և 9608 50 000 0-ից ծածկագրեր):

44. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 15-ի N 686-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

11.12.2025թ. N 1777-Ն

Հրապարակումը

11.12.2025թ.

Ուժի մեջ է

12.12.2025թ.

Հղում

<https://www.arlis.am/hy/acts/217733/latest>

Համառոտ նկարագիր

ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 15-ի թիվ 686-Ա որոշմամբ սահմանված է շինությունների ցանկ, մինչդեռ ՀՀ հարկային օրենսգրքով անշարժ գույքի հարկի համակարգի փոփոխությամբ գույքահարկի և հողի հարկի փոխարեն հողի և դրա բարելավումների համար ներդրվել է անշարժ գույքի հարկը: Որոշմամբ ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 15-ի թիվ 686-Ա որոշման մեջ օգտագործված՝ շինություն բառը փոխարինվել է անշարժ գույք ձևակերպմամբ՝ ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված ձևակերպմանը համապատասխանեցնելու նպատակով:

45. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության տարածքից ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 7112 99 000 0 ծածկագրին դասվող ավտոմեքենաների խլացուցիչների օգտագործված կատալիզատորների կերամիկական թափոնների արտահանման ժամանակավոր արգելք կիրառելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

11.12.2025թ. N 1797-Ն

Հրապարակումը

11.12.2025թ.

Ուժի մեջ է

05.01.2026թ.

Հղում

<https://www.arlis.am/hy/acts/217765/latest>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանման (այդ թվում՝ Եվրասիական տնտեսական միության երկրներ տեղափոխման) ժամանակավոր արգելք՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 7112 99 000 0 ծածկագրին դասվող ավտոմեքենաների խլացուցիչների օգտագործված կատալիզատորների կերամիկական թափոնների վրա:

46. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 20-ի N 765-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

18.12.2025թ. N 1866-Ն

Հրապարակումը

19.12.2025թ.

Ուժի մեջ է

20.12.2025թ.

Հղում

<https://www.arlis.am/hy/acts/218247/latest>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ փոփոխություններ են կատարվել ՀՀ կառավարության 2004 թվականի մայիսի 20-ի «Հսկվող ապրանքների և հսկվող ոչ նյութական արժեքների, ռազմական նշանակության արտադրանքի մասնագիտական փորձաքննության անցկացման և փորձագիտական եզրակացության կազմման և ներկայացման կարգի մասին» N 765-Ն որոշման մեջ, որով սահմանվել է, որ փորձագիտական կազմակերպությունների կողմից փորձագիտական եզրակացությունը Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե կներկայացվի՝ համապատասխան պահանջի առկայության դեպքում:

47. Փաստաթուղթ

«Չինաստանի Ժողովրդական Հանրապետության ծագում ունեցող ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 3206 11 000 0 ծածկագրին դասվող չոր նյութի վերահաշվարկով 80 զանգվածային տոկոս կամ ավելի տիտանի երկօքսիդ պարունակող գունանյութերի և պատրաստուկների՝ առանց հակազնագցման տուրքի վճարման հայաստանի հանրապետության տարածք ներմուծման ընթացակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

18.12.2025թ. N 1868-Ն

Հրապարակումը

19.12.2025թ.

Ուժի մեջ է

20.12.2025թ.

Հղում

<https://www.arlis.am/hy/acts/218264/latest>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է որ՝

1. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողեգիայի 2025 թվականի հոկտեմբերի 14-ի N 96 որոշման 5-րդ կետով նախատեսված՝ հակազնագցման տուրքի վճարումից ազատվում են Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող՝ Չինաստանի Ժողովրդական

Հանրապետության ծագում ունեցող և ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 3206 11 000 0 ծածկագրին դասվող չոր նյութի վերահաշվարկով 80 զանգվածային տոկոս կամ ավելի տիտանի երկօքսիդ պարունակող գունանյութերը և պատրաստուկները (բացառությամբ որոշման 2-րդ հավելվածում թվարկված գունանյութերի տեսակների)՝ տարեկան 250 տոննա ծավալով,

2. հակազնագցման տուրքը չի գանձվում նաև որոշման 3-րդ հավելվածով նախատեսված ցանկում նշված արտադրողների կողմից պատրաստվող տիտանի երկօքսիդի նկատմամբ, եթե հայտատուն ապրանքների մասին հայտարարագրի գրանցման օրվա դրությամբ ունի համապատասխան արտադրողի լիազորված աշխատակցի կողմից ստորագրված և այդ արտադրողի կնիքով հաստատված՝ արտադրողի հավաստագրի ձևը, և ապրանքների մասին հայտարարագրում այդպիսի հավաստագրի մասին տեղեկություններ ներկայացնելու դեպքում:

48. Փաստաթուղթ

«2026 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածք Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության ծագում ունեցող երկարահատիկ բրնձի նկատմամբ սակագնային քվոտա սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

18.12.2025թ. N 1893-Ն

Հրապարակումը

19.12.2025թ.

Ուժի մեջ է

01.01.2026թ.

Հղում

<https://www.arlis.am/hy/acts/218340/latest>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է որ՝

1. 2026 թվականի ընթացքում Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության ծագում ունեցող երկարահատիկ բրնձի առանձին տեսակների (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 1006 30 670 1 և 1006 30 980 1) «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգի կիրառմամբ՝ ներմուծումը Վիետնամի Սոցիալիստական Հանրապետությունից թույլատրվում է՝ 0 տոկոս ներմուծման մաքսատուրքի դրույքաչափի կիրառման պայմանով՝ 250 տոննայից ոչ ավելի ծավալով՝ լիցենզիայի առկայության դեպքում,

2. արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների միջև Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության ծագում ունեցող երկարահատիկ բրնձի առանձին տեսակների (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 1006 30 670 1 և 1006 30 980 1) Հայաստանի Հանրապետություն Վիետնամի Սոցիալիստական Հանրապետությունից ներմուծման մեկանգամյա և գլխավոր լիցենզիաների տրամադրման ընթացակարգը և ձևերը սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հուլիսի 3-ի N 904-Ն որոշմամբ:

49. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի նոյեմբերի 28-ի N 1876-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

18.12.2025թ. N 1902-Ն

Հրապարակումը	19.12.2025թ.
Ուժի մեջ է	20.12.2025թ.
Հղում	https://www.arlis.am/hy/acts/218350/latest

Համառոտ նկարագիր

Որոշմամբ լրացումներ են կատարվել ՀՀ կառավարության 2024 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8703 80 000 2 ծածկագրին դասվող էլեկտրաշարժիչով շարժիչային տրանսպորտային միջոցների նկատմամբ 2025 թվականի ընթացքում սակագնային արտոնություն կիրառելու և ներմուծման ընթացակարգը հաստատելու մասին» N 1876-Ն որոշման մեջ, որոնց արդյունքում 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, դիլերական-դիստրիբյուտորական պայմանագրի (համաձայնագրի) շրջանակներում ներմուծում իրականացնող շահառուների կողմից չներմուծված քանակի չափով՝ կիրառելով ժամանակագրական սկզբունքը, հերթականությունը, իրականացվում է վճարված ներմուծման մաքսատուրքի վերադարձ, այն ֆիզիկական անձանց, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերին և իրավաբանական անձանց, ովքեր N 1876-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված 5000 հատ չափաքանակը սպառվելուց հետո իրականացրել են ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8703 80 000 2 ծածկագրին դասվող էլեկտրաշարժիչով շարժիչային տրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպում և կատարել են համապատասխան վճարումները:

50. Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության տարածքից սիգի ձկնկիթի արտահանման ժամանակավոր արգելք սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	25.12.2025թ. N 1918-Ն
Հրապարակումը	25.12.2025թ.
Ուժի մեջ է	02.01.2026թ.
Հղում	https://www.arlis.am/hy/acts/218740/latest

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանման (այդ թվում՝ Եվրասիական տնտեսական միության երկրներ տեղափոխման) ժամանակավոր արգելք վեց ամիս ժամկետով՝ Եվրասիական տնտեսական միության ԱՏԳ ԱԱ 0302 91 000 0, 0303 91, 1604 32 001 0 և 0511 91 901 9 ծածկագրերին դասվող՝ Հայաստանի Հանրապետության ծագում ունեցող սաղմոնազգիներից սիգի ձկնկիթի վրա:

51. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետությունից Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող երկրներ մի շարք ապրանքների արտահանման ժամանակավոր արգելք կիրառելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

25.12.2025թ. N 1931-Ն

Հրապարակումը

25.12.2025թ.

Ուժի մեջ է

06.01.2026թ.

Հղում

<https://www.arlis.am/hy/acts/218783/latest>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է, որ Հայաստանի Հանրապետությունից դեպի Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող երկրներ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 1001 19 000 0, 1001 99 000 0, 1003 90 000 0, 1005 90 000 0, 1008 10 000, 1206 00 990 0, 1512 11 910, 1512 19 900 2, 1512 19 900 9 ծածկագրերին դասվող ապրանքների (ցորեն, մեսլին, գարի, եգիպտացորեն, հնդկացորեն, արևածաղկի սերմ, արևածաղկի ձեթ) արտահանումն արգելվում է վեց ամիս ժամկետով:

52. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող առանձին տեսակի գյուղատնտեսական ապրանքների նկատմամբ սակագնային քվոտա կիրառելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

25.12.2025թ. N 1933-Ն

Հրապարակումը

25.12.2025թ.

Ուժի մեջ է

01.01.2026թ.

Հղում

<https://www.arlis.am/hy/acts/218771/latest>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ կիրառվել է սակագնային քվոտա՝ 2026 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող առանձին տեսակի գյուղատնտեսական ապրանքների նկատմամբ:

Միաժամանակ, սահմանվել է, որ՝

1. որոշմամբ նախատեսված սակագնային քվոտայի կիրառումը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածք «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգի կիրառմամբ ներմուծվող՝ սույն որոշման հավելվածում նշված առանձին տեսակի գյուղատնտեսական ապրանքների վրա՝ բացառությամբ Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) անդամ պետությունների ծագում ունեցող և ներմուծվող ապրանքների,

2. 2026 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող առանձին տեսակի գյուղատնտեսական ապրանքների ներմուծումը թույլատրվում է հավելվածով սահմանված քվոտայից ոչ ավելի ծավալով՝ լիցենզիայի առկայության դեպքում,

3. առանձին տեսակի գյուղատնտեսական ապրանքների ներմուծման լիցենզիա տալու մասով լիազոր մարմին է ճանաչվել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը,

4. արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների միջև առանձին տեսակի գյուղատնտեսական ապրանքների՝ Հայաստանի Հանրապետություն ներմուծման մեկանգամյա և գլխավոր լիցենզիաների տրամադրման ընթացակարգը և ձևերը սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հուլիսի 3-ի N 904-Ն որոշմամբ:

53. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հուլիսի 1-ի N 924-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

25.12.2025թ. N 1939-Ն

Հրապարակումը

25.12.2025թ.

Ուժի մեջ է

26.12.2025թ.

Հղում

<https://www.arlis.am/hy/acts/218770/latest>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ փոփոխություններ են կատարվել ՀՀ կառավարության 2010 թվականի հուլիսի 1-ի «Երկակի նշանակության ապրանքների արտահանման, Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողություն իրականացնող լիազոր մարմին ճանաչելու, երկակի նշանակության ապրանքների արտահանման, Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման թույլտվության տրամադրումն այլ շահագրգիռ պետական մարմինների հետ համաձայնեցնելու կարգը և անհրաժեշտ փաստաթղթերի ձևերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի փետրվարի 19-ի N 212-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 20-ի N 765-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 924-Ն որոշման N 1 հավելվածում, որոնց արդյունքում կրճատվել են երկակի նշանակության ապրանքների արտահանման, Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման թույլտվության տրամադրման գործընթացի ժամկետները, մասնավորապես՝

1. թույլտվության տրամադրման մասին դրական դիրքորոշման ձևավորման դեպքում լիազոր մարմինը 3 աշխատանքային օրվա ընթացքում թույլտվության տրամադրման մասին դիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը, ինչպես նաև իր դիրքորոշումը համաձայնեցման է ուղարկում Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության պաշտպանության

նախարարություն, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայություն, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, այլ շահագրգիռ պետական մարմիններ,

2. շահագրգիռ պետական մարմինները, վերոնշյալ փաստաթղթերն ստանալու պահից 4 աշխատանքային օրվա ընթացքում, ուսումնասիրում և լիազոր մարմին են հայտնում թույլտվության տրամադրման վերաբերյալ իրենց կարծիքները (բացասական կարծիքի դեպքում՝ նաև հիմնավորումը):

54. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի օգոստոսի 24-ի N 1418-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

25.12.2025թ. N 1941-Ն

Հրապարակումը

25.12.2025թ.

Ուժի մեջ է

01.01.2026թ.

Հղում

<https://www.arlis.am/hy/acts/218769/latest>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ ընդլայնվել է ՀՀ կառավարության 2023 թվականի օգոստոսի 24-ի «Հսկիչ (նույնականացման) նշաններով դրոշմավորման ենթակա ապրանքների շրջանառության նկատմամբ մոնիտորինգի տեղեկատվական համակարգի ներդրման առանձնահատկությունները հաստատելու մասին» N 1418-Ն որոշմամբ հաստատված հավելվածով սահմանված համակարգի մասնակիցների ցանկը, ներառելով՝

1. Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին,
2. Շուկայի վերահսկողության տեսչական մարմին,
3. Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին
4. Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովին:

55. Փաստաթուղթ

«Դրոշմավորման ծածկագրերի տրամադրման գները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

25.12.2025թ. N 1943-Ն

Հրապարակումը

25.12.2025թ.

Ուժի մեջ է

01.01.2026թ.

Հղում

<https://www.arlis.am/hy/acts/218804/latest>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ հաստատվել է դրոշմավորման ծածկագրերի տրամադրման գները 2.5 դրամ (առանց ԱԱՀ)՝ դրոշմավորման յուրաքանչյուր ծածկագրի տրամադրման համար՝ բացառությամբ սույն որոշման 3-րդ կետին համապատասխան հաշվարկված՝ դրոշմավորման ծածկագրերի քանակի, որոնց տրամադրման գինը հաստատվել է 0.01 դրամ (առանց ԱԱՀ-ի): Ընդ որում, սահմանվել է, որ դրոշմավորման ծածկագրի տրամադրման գինը կիրառվում է 2026 թվականի հունվարի 1-ից մինչև 2028 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ներկայացված՝ դրոշմավորման ծածկագրեր ստանալու հայտերի հիման վրա տրամադրվող դրոշմավորման ծածկագրերի նկատմամբ:

Միաժամանակ, սահմանվել է, որ դրոշմավորման ծածկագրերի տրամադրման 0.01 դրամ (առանց ԱԱՀ-ի) գինը կիրառվում է հարկ վճարողի՝ ներկայացված դրոշմավորման ծածկագրեր ստանալու հայտերի հիման վրա 2025 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ տրամադրված դրոշմավորման ծածկագրերի քանակի և 2.5-ի հարաբերության արդյունքում ստացված քանակի նկատմամբ:

56. Փաստաթուղթ

«Մինչև 2026 թվականի հունվարի 1-ը կնքված և շարունակվող աշխատանքային պայմանագրերի, ինչպես նաև մինչև 2025 թվականի հուլիսի 1-ն ընդունված և գործող աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտերի՝ թվային համակարգ մուտքագրելու կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի ապրիլի 10-ի N 410-ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

25.12.2025թ. N 1954-Ն

Հրապարակումը

25.12.2025թ.

Ուժի մեջ է

01.01.2026թ.

Հղում

<https://www.arlis.am/hy/acts/218799/latest>

Համառոտ նկարագիր

Մինչև 2026 թվականի հունվարի 1-ը կնքված և շարունակվող աշխատանքային պայմանագրերի, ինչպես նաև մինչև 2025 թվականի հուլիսի 1-ն ընդունված և գործող աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտերի՝ թվային համակարգ մուտքագրելու՝ կարգով սահմանվում է, որ՝

- գործատուն կամ նրա ներկայացուցիչը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի «Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի» համապատասխան էջի միջոցով անհրաժեշտ դաշտերը լրացնելով, թվային համակարգ է մուտքագրում մինչև 2026 թվականի հունվարի 1-ը կնքված և շարունակվող աշխատանքային պայմանագրերը (եթե աշխատանքային պայմանագրերը չեն կնքվել թվային համակարգի միջոցով), ինչպես նաև մինչև 2025 թվականի հուլիսի 1-ն ընդունված և գործող աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտերը՝ մուտքագրման պահին գործող պայմաններով: Ֆիզիկական անձ գործատուն մուտքագրումն իրականացնում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ֆիզիկական անձանց էլեկտրոնային ծառայությունների միասնական հարթակի համապատասխան էջի միջոցով՝ անհրաժեշտ դաշտերը լրացնելով,

- աշխատանքային պայմանագիրը (անհատական իրավական ակտը) ստորագրվում է գործատուի էլեկտրոնային թվային ստորագրությամբ,
- գործատուի կողմից ստորագրված աշխատանքային պայմանագիրը (աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտը) արտացոլվում է աշխատողի (իսկ մինչև տասնվեց տարեկան անձի մասնակցությամբ աշխատանքային հարաբերությունների ծագման դեպքում՝ ծնողներից կամ խնամատար ծնողներից կամ որդեգրողներից մեկի կամ խնամակալի)՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ֆիզիկական անձանց էլեկտրոնային ծառայությունների միասնական հարթակի համապատասխան էջում, որի մասին համակարգի կողմից ինքնաշխատ ծանուցում է ուղարկվում աշխատողի էլեկտրոնային հասցեին,
- գործատուի կողմից ստորագրված աշխատանքային պայմանագիրը ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ֆիզիկական անձանց էլեկտրոնային ծառայությունների միասնական հարթակի համապատասխան էջում արտացոլվելուց հետո աշխատողը (իսկ մինչև տասնվեց տարեկան անձի մասնակցությամբ աշխատանքային հարաբերությունների դեպքում՝ ծնողներից կամ խնամատար ծնողներից կամ որդեգրողներից մեկը կամ խնամակալը) էլեկտրոնային թվային ստորագրությամբ ստորագրում է աշխատանքային պայմանագիրը: Նույն կետով նախատեսված գործողությունն անհրաժեշտ է իրականացնել մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը,
- մուտքը ֆիզիկական անձանց էլեկտրոնային ծառայությունների միասնական համակարգ իրականացվում է ՀՀ «Ես եմ» ազգային նույնականացման հարթակի միջոցով՝ համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 25-ի N 572-Ն որոշման, իսկ կացության կարգավիճակ չունեցող օտարերկրացիների մուտքը՝ հարկ վճարողի հաշվառման համարով (ՀՎՀՀ) և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվող մուտքանուն-գաղտնաբառով,
- ՀՀ քաղաքացիների համար կիրառվում է նույնականացման քարտում զետեղված էլեկտրոնային թվային ստորագրություն կամ բջջային էլեկտրոնային թվային ստորագրություն՝ համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 25-ի N 572-Ն որոշմամբ սահմանված պահանջների, իսկ օտարերկրացիների համար՝ այլ էլեկտրոնային թվային ստորագրության լուծումներ՝ համաձայն ՀՀ կառավարության 2018 թվականի մարտի 1-ի N 285-Ն որոշմամբ և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 25-ի N 572-Ն որոշմամբ սահմանված պահանջների:

57. Փաստաթուղթ

«2026 թվականի ընթացքում Սերբիայի Հանրապետությունից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող սերբական ծագում ունեցող առանձին տեսակի ապրանքների նկատմամբ սակագնային քվոտա կիրառելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

25.12.2025թ. N 1956-Ն

Հրապարակումը

25.12.2025թ.

Ուժի մեջ է

01.01.2026թ.

Հղում

<https://www.arlis.am/hy/acts/218796/latest>

Որոշմամբ կիրառվել է սակագնային քվոտա՝ 2026 թվականի ընթացքում Սերբիայի Հանրապետությունից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող սերբական ծագում ունեցող առանձին տեսակի ապրանքների նկատմամբ:

Միաժամանակ, սահմանվել է, որ՝

1. սակագնային քվոտայի կիրառումը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածք «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգի կիրառմամբ ներմուծվող՝ որոշման հավելվածում նշված սերբական ծագում ունեցող առանձին տեսակի ապրանքների վրա,

2. 2026 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող սերբական ծագում ունեցող առանձին տեսակի ապրանքների ներմուծումը Սերբիայի Հանրապետությունից թույլատրվում է՝ 0 տոկոս ներմուծման մաքսատուրքի դրույքաչափի կիրառման պայմանով՝ հավելվածով սահմանված քվոտայից ոչ ավելի ծավալով՝ լիցենզիայի առկայության դեպքում,

3. առանձին տեսակի սերբական ծագում ունեցող ապրանքների ներմուծման լիցենզիա տալու մասով լիազոր մարմին է ճանաչվում Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը,

4. արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների միջև առանձին տեսակի սերբական ծագում ունեցող ապրանքների՝ Հայաստանի Հանրապետություն ներմուծման մեկանգամյա և գլխավոր լիցենզիաների տրամադրման ընթացակարգը և ձևերը սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հուլիսի 3-ի N 904-Ն որոշմամբ:

58. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8703 80 000 3 և 8703 80 000 5 ծածկագրերին դասվող էլեկտրաշարժիչով շարժիչային տրանսպորտային միջոցների նկատմամբ 2026 թվականի ընթացքում սակագնային արտոնություն կիրառելու և ներմուծման ընթացակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

25.12.2025թ. N 1971-Ն

Հրապարակումը

26.12.2025թ.

Ուժի մեջ է

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2025 թվականի դեկտեմբերի 5-ի N 111 որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից, բայց ոչ շուտ, քան 2026 թվականի հունվարի 1-ը:

Հղում

<https://www.arlis.am/hy/acts/218884/latest>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է, որ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8703 80 000 3 և 8703 80 000 5 ծածկագրերին դասվող 2023 թվականի դեկտեմբերի 31-ից հետո թողարկված՝ էլեկտրաշարժիչով շարժիչային տրանսպորտային միջոցների «Բացթողում ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ձևակերպումը կամ, որպես, անձնական օգտագործման տրանսպորտային

միջոց, ազատ շրջանառության համար բացթողումը 2026 թվականի ընթացքում թույլատրվում է 0 տոկոս ներմուծման մաքսատուրքի դրույքաչափի կիրառման պայմանով՝ 15000 հատից ոչ ավելի քանակով, որից՝

1. ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8703 80 000 3 և 8703 80 000 5 ծածկագրերին դասվող 12 000 հատից ոչ ավելի քանակով ապրանքների՝ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծումը թույլատրվում է սույն կետի 2-րդ ենթակետում չնշված սուբյեկտներին (այդ թվում՝ ֆիզիկական անձանց),

2. ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8703 80 000 3 և 8703 80 000 5 ծածկագրերին դասվող 3 000 հատից ոչ ավելի քանակով ապրանքների՝ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծումը թույլատրվում է բացառապես անմիջապես ավտոարտադրողի հետ կնքված դիլերական-դիստրիբյուտորական պայմանագրի (համաձայնագրի) շրջանակներում ներմուծում իրականացնող սուբյեկտներին:

59. Փաստաթուղթ

«Հարկային մարմնի և առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամի միջև տեղեկատվության փոխանակման կարգը, ինչպես նաև ֆինանսների բնագավառում պետական կառավարման լիազորված մարմնին ներկայացվող հանձնարարականի ձևը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

30.12.2025թ. N 1987-Ն

Հրապարակումը

30.12.2025թ.

Ուժի մեջ է

31.12.2025թ.

<https://www.arlis.am/hy/acts/219163/latest>

Հղում

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է հարկային մարմնի և առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամի միջև տեղեկատվության փոխանակման (այդ թվում՝ ապահովագրավճարների գծով ամբողջական պարտավորության մարման դեպքում ապահովագրավճար վճարողների ցուցակը առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամին տրամադրելու) կարգը, ինչպես նաև ֆինանսների բնագավառում պետական կառավարման լիազորված մարմնին ներկայացվող վճարման հանձնարարականի ձևը:

60. Փաստաթուղթ

«Լիազորված տնտեսական օպերատորի կողմից մաքսային մարմիններ ներկայացվող հաշվետվության ձևը սահմանելու և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2015 թվականի օգոստոսի 26-ի N 583-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման

Ամսաթիվը և համարը

13.10.2025թ. N 1422-Ն

Հրապարակումը

16.10.2025թ.

**Ուժի մեջ է
Հղում**

26.10.2025թ.
<https://www.arlis.am/hy/acts/214804/latest>

Համառոտ նկարագիր

Հրամանով սահմանվել է լիազորված տնտեսական օպերատորի կողմից հատուկ պարզեցումներով տեղափոխվող ապրանքների վերաբերյալ մաքսային մարմիններին ներկայացվող հաշվետվության ձևը:

Միաժամանակ, ուժը կորցրած է ճանաչվել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2015 թվականի օգոստոսի 26-ի «Լիազորված տնտեսական օպերատորի կողմից մաքսային մարմիններ ներկայացվող հաշվետվության ձևը սահմանելու մասին» N 583-Ն հրամանը:

61. Փաստաթուղթ

«Մաքսային ներկայացուցիչների կողմից իրենց գործունեության վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգը և հաշվետվությունների ձևը սահմանելու մասին» ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման

Ամսաթիվը և համարը

13.10.2025թ. N 1424-Ն

Հրապարակումը

15.10.2025թ.

Ուժի մեջ է

25.10.2025թ.

Հղում

<https://www.arlis.am/hy/acts/214774/latest>

Համառոտ նկարագիր

Հրամանով սահմանվել են՝

1. չհավաքված, կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված տեսքով ապրանքի՝ մինչև հայտարարագրումը նախատեսվող առաքումների վերաբերյալ հայտարարատուի կողմից մաքսային մարմիններ ուղարկվող ծանուցման ձևը,
2. չհավաքված, կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված ապրանքի հայտարարագրման ժամկետի երկարաձգման կարգը:

62. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2016 թվականի դեկտեմբերի 30-ի N 300-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման

Ամսաթիվը և համարը

15.10.2025թ. N 1436-Ն

Հրապարակումը

21.10.2025թ.

Ուժի մեջ է

31.10.2025թ. - Հրամանով սահմանված որոշ ենթակետերի համար ուժի մեջ մտնելու ժամկետը փոփոխվել է ՀՀ ՊԵԿ նախագահի N 1829-Ն հրամանով, այն է՝ 01.07.2026թ.:

Հղում

<https://www.arlis.am/hy/acts/215156/latest>

Համառոտ նկարագիր

Հրամանով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2016 թվականի դեկտեմբերի 30-ի «Եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական (պարզեցված) հաշվարկների, եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկի (հայտարարագրի), տեղեկությունների և տեղեկանքի ձևերը և դրանց լրացման կարգերը հաստատելու մասին» N 300-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ են կատարվել, որոնց արդյունքում հրամանը համապատասխանեցվել է կրիպտոակտիվների օտարման գործարքների մասով 29.05.2025թ. ՀՕ-175-Ն օրենքով կատարված փոփոխությանը:

Միաժամանակ, սահմանվել է, որ եկամտային հարկի ամսական (պարզեցված) հաշվարկներում ՀՀ պետական բյուջեի միջոցներով վճարված նպաստների մասով տվյալները լրացվում են այն դեպքերում, երբ ժամանակավոր անաշխատունակության առաջին օրը մինչև 2025 թվականի սեպտեմբերի 1-ն է:

Ինչպես նաև, եկամտային հարկի հաշվարկներում նախատեսվել է համապատասխան տվյալների լրացման հնարավորություն այն դեպքերի համար, երբ կրկնակի հարկումը բացառելու մասին ՀՀ գործող միջազգային պայմանագրերի համաձայն նախատեսված է վարձու աշխատողի ստացած եկամուտների հարկում օտարերկրյա պետությունում և ՀՀ-ում՝ օտարերկրյա պետությունում վճարված հարկի գումարի նվազեցում:

63. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 749-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման

Ամսաթիվը և համարը

15.10.2025թ. N 1437-Ն

Հրապարակումը

21.10.2025թ.

Ուժի մեջ է

01.01.2026թ. Ուժի մեջ մտնելու ժամկետը փոփոխվել է ՀՀ ՊԵԿ նախագահի N 1828-Ն հրամանով, այն է՝ 01.07.2026թ.

Հղում

<https://www.arlis.am/hy/acts/215155/latest>

Համառոտ նկարագիր

Հրամանով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի «Շահութահարկի հաշվարկների ձևերը, անհատ ձեռնարկատիրոջ և նոտարի սոցիալական վճարի հաշվարկի ձևը և դրանց լրացման կարգերը հաստատելու մասին» N 749-Ն հրամանում փոփոխություններ են կատարվել, որոնց արդյունքում դրոշմանիշային վճարներն արտացոլվելու են համապատասխան հարկային հաշվարկներում:

64. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2019 թվականի օգոստոսի 27-ի N 558-Ն հրամանում լրացումներ կատարելու մասին» ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման

Ամսաթիվը և համարը

15.10.2025թ. N 1438-Ն

Հրապարակումը

21.10.2025թ.

Ուժի մեջ է

01.01.2026թ. Ուժի մեջ մտնելու ժամկետը փոփոխվել է ՀՀ ՊԵԿ նախագահի N 1827-Ն հրամանով, այն է՝ 01.07.2026թ.

Հղում

<https://www.arlis.am/hy/acts/215165/latest>

Համառոտ նկարագիր

Հրամանով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2019 թվականի օգոստոսի 27-ի «Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարությունների, անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ արտոնագրի և միկրոձեռնարկատիրության սուբյեկտի իրացման շրջանառության վերաբերյալ հաշվետվության ձևերը հաստատելու մասին» N 558-Ն հրամանում լրացումներ են կատարվել, որոնց արդյունքում դրոշմանիշային վճարներն արտացոլվելու են համապատասխան հարկային հաշվարկներում:

65. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2025 թվականի հոկտեմբերի 13-ի N 1424-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման

Ամսաթիվը և համարը

04.11.2025թ. N 1505-Ն

Հրապարակումը

06.11.2025թ.

Ուժի մեջ է

07.11.2025թ.

Հղում

<https://www.arlis.am/hy/acts/215984/latest>

Համառոտ նկարագիր

Հրամանով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2025 թվականի հոկտեմբերի 13-ի «Մաքսային ներկայացուցիչների կողմից իրենց գործունեության վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգը և հաշվետվությունների ձևը սահմանելու մասին» N 1424-Ն հրամանում փոփոխություններ են կատարվել, որոնց արդյունքում մաքսային ներկայացուցիչների գործունեության վերաբերյալ հաշվետվությունների ձևը շարադրվել է նոր խմբագրությամբ, իսկ մինչև հրամանն ուժի մեջ մտնելը մաքսային ներկայացուցիչների ռեեստրում ներառված մաքսային ներկայացուցիչների համար առաջին անգամ հաշվետվության ներկայացման նոր ժամկետը սահմանվել է մինչև 2026 թվականի հունվարի 15-ը՝ 2025 թվականի 2-րդ կիսամյակի գործունեության մասով:

66. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018 թվականի հունիսի 8-ի N 345-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման

Ամսաթիվը և համարը

27.11.2025թ. N 1629-Ն

Հրապարակումը

28.11.2025թ.

Ուժի մեջ է

29.11.2025թ.

Հղում

<https://www.arlis.am/hy/acts/217181/latest>

Համառոտ նկարագիր

Հրամանով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018 թվականի հունիսի 8-ի «Կազմակերպությունների և ֆիզիկական անձանց Հայաստանի Հանրապետության ռեզիդենտի կարգավիճակը հաստատող տեղեկանքի ձևը հաստատելու մասին» N 345-Ն հրամանում կատարված փոփոխությունների արդյունքում հաստատվել են կազմակերպությունների և ֆիզիկական անձանց՝ ՀՀ ռեզիդենտի կարգավիճակի հաստատման նպատակով ներկայացվող դիմումների և ռեզիդենտության տեղեկանքի նոր ձևերը:

67. Փաստաթուղթ

«Մի շարք հրամաններ ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման

Ամսաթիվը և համարը

10.12.2025թ. N 1712-Ն

Հրապարակումը

16.12.2025թ.

Ուժի մեջ է

17.12.2025թ.

Հղում

<https://www.arlis.am/hy/acts/218007/latest>

Համառոտ նկարագիր

Հրամանով ուժը կորցրած են ճանաչվել մի շարք հրամաններ՝

1. Հայաստանի Հանրապետության մաքսային վարչության պետի 1997 թվականի նոյեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք ներմուծվող ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ակցիզային հարկի հաշվարկման կարգի մասին» հրահանգի հաստատման մասին» N 107 հրամանը,

2. Հայաստանի Հանրապետության մաքսային վարչության պետի 1998 թվականի փետրվարի 28-ի «Այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներով Հայաստանի Հանրապետության պետական ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար վճարի հաշվարկման և վճարման կարգի մասին» հրահանգի հաստատման մասին» N 7-ՄՎը հրամանը,

3. Հայաստանի Հանրապետության մաքսային վարչության պետի 1998 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և այլ առարկաների մաքսային ձևակերպման մասին» N 70-ՄՎԸ հրամանը,

4. Հայաստանի Հանրապետության մաքսային վարչության պետի 1998 թվականի հունիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով փոխադրվող ապրանքների և տրանսպորտային միջոցների բեռնային մաքսային հայտարարագրման, ըստ բացթողման մաքսային ռեժիմների բեռնային մաքսային հայտարարագրի լրացման կարգը հաստատելու մասին» N 71-ՄՎԸ հրամանը,

5. Հայաստանի Հանրապետության մաքսային վարչության պետի 1998 թվականի հունիսի 18-ի «Քաղաքացիների կողմից մաքսային սահմանով փոխադրվող ապրանքների և այլ առարկաների հայտարարագրման ենթակա տեղեկությունների ցանկի մասին» հրահանգը հաստատելու մասին» N 74-ՄՎԸ հրամանը,

6. Հայաստանի Հանրապետության մաքսային վարչության պետի 1998 թվականի հուլիսի 10-ի «ՀՀ մաքսային սահմանով անցնող քաղաքացիների կողմից հայտարարագրման ենթակա տեղեկությունների ցանկի մասին» հրահանգը հաստատելու մասին» N 86-ՄՎԸ հրամանը.

7. Հայաստանի Հանրապետության մաքսային վարչության պետի 1999 թվականի փետրվարի 4-ի ««Անմաքս առևտրի խանութներ կազմակերպելու մասին» հրահանգը հաստատելու մասին» N 15-ՄՎ հրամանը,

8. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարի 2000 թվականի դեկտեմբերի 26-ի ««Խողովակաշարերով և էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքների նախնական հայտարարագրման դեպքերը և կարգը սահմանելու մասին» հրահանգը հաստատելու մասին» N 02/1623 հրամանը,

9. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարության 2000 թվականի դեկտեմբերի 5-ի «Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 70 հոդվածի, 96 հոդվածի 2-րդ կետի և 117 հոդվածի պահանջներն ապահովելու մասին» N 02/1508 հրամանը,

10. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարության 2001 թվականի փետրվարի 26-ի «Մաքսային արժեքի մանրամասնությունների հայտարարագրի լրացման կարգի հաստատման մասին» N 02/207 հրամանը,

11. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարության 2001 թվականի փետրվարի 26-ի «Մաքսային ձևակերպման նպատակով ապրանքներից նմուշներ և փորձանմուշներ վերցնելու դեպքում կազմվող արձանագրության ձևը հաստատելու մասին» N 02/208 հրամանը,

12. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի 2006 թվականի մարտի 1-ի «Փոխադրման ամփոփագրի ձևը, «փոխադրման ամփոփագրի լրացման» ու «փոխադրման ամփոփագրի ձևաթղթերի շրջանառության և հաշվառման» կարգերը հաստատելու մասին» N 06/20-Ն հրամանը,

13. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի «Լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակի տրամադրման համար անվտանգության առումով ռիսկային չհամարվող երկրների չափանիշները սահմանելու մասին» N 280-Ն հրամանը,

14. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2017 թվականի հունվարի 12-ի «Մաքսային մարմնի կողմից հայտարարատուին կամ նրա կողմից լիազորված անձին տրամադրվող մաքսատուրքի, հարկերի վճարման անդորրագրի ձևը սահմանելու մասին» N 4-Ն հրամանը,

15. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2017 թվականի մարտի 21-ի «Ապրանքների մաքսային արժեքի հայտարարագրերի ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2015 թվականի հունիսի 5-ի N 357-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 95-Ն հրամանը,

16. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2013 թվականի հուլիսի 3-ի «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի պարզաբանումները հաստատելու մասին» N 290-Ն հրամանը,

17. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2013 թվականի հուլիսի 17-ի «Պարզեցված մաքսային հայտարարագրի ձևը հաստատելու մասին» N 312-Ն հրամանը,

18. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2014 թվականի ապրիլի 10-ի «Հայտարարագրված ապրանքների և տրանսպորտային միջոցների բացթողումից հետո մաքսային մարմինների ընդունած մաքսային հայտարարագրի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու ճշգրտումների փաստաթղթի ձևը հաստատելու մասին» N 155-Ն հրամանը,

19. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2015 թվականի մարտի 9-ի «Հայաստանի Հանրապետության տարածքից մետաղների խտանյութի արտահանման համար մաքսային մարմիններին մետաղների խտանյութի փորձաքննության վերաբերյալ եզրակացության մեջ ներկայացվող տեղեկությունների ցանկը սահմանելու մասին» N 120-Ն հրամանը,

20. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2015 թվականի հունիսի 8-ի «Ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման մասին որոշման ձևը հաստատելու մասին» N 369-Ն հրամանը,

21. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2015 թվականի օգոստոսի 26-ի «Լիազորված տնտեսական օպերատորի ռեեստրում հաշվառման մասին վկայականի ձևը և լրացման կարգը հաստատելու մասին» N 584-Ն հրամանը:

68. Փաստաթուղթ

«Պետության կարիքների համար ներմուծվող, պարտադիր գրանցում չպահանջող բժշկական արտադրատեսակների ներմուծման դեպքերը սահմանելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման

Ամսաթիվը և համարը

08.10.2025թ. N 137-Ն

Հրապարակումը

14.10.2025թ.

Ուժի մեջ է

31.12.2027թ.

Հղում

<https://www.arlis.am/hy/acts/214661/latest>

Համառոտ նկարագիր

Հրամանով սահմանվել են պետության կարիքների համար ներմուծվող, պարտադիր գրանցում չպահանջող բժշկական արտադրատեսակների ներմուծման դեպքերը:

2. Եվրասիական տնտեսական միության օրենսդրության նորություններ

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշումներ

1. Փաստաթուղթ

«Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող որոշ տեսակի գյուղատնտեսական ապրանքների նկատմամբ 2026 թվականի համար սակագնային քվոտաների, ինչպես նաև Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տարածքներ ներմուծվող այդ ապրանքների սակագնային քվոտաների ծավալների սահմանման մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշում

Ամսաթիվը և համարը

07.10.2025թ. N89

Հրապարակումը

10.10.2025թ.

Ուժի մեջ է

09.11.2025թ.

Հղում

<https://docs.eaeunion.org/>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել են Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող որոշ տեսակի գյուղատնտեսական ապրանքների նկատմամբ 2026 թվականի համար սակագնային քվոտաները, ինչպես նաև Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող պետությունների տարածքներ քվոտաների սահմաններում այդ ապրանքների ներմուծման ծավալները՝ նույն որոշման հավելվածին համապատասխան:

2. Փաստաթուղթ

«Ապրանքների հայտարարագրի լրացման կարգի 15-րդ կետի 42-րդ ենթակետում փոփոխություններ կատարելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշում

Ամսաթիվը և համարը

17.11.2025թ. N104

Հրապարակումը

20.11.2025թ.

Ուժի մեջ է

01.01.2026թ.

Հղում

<https://docs.eaeunion.org/>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ փոփոխություն է կատարվել Մաքսային միության հանձնաժողովի 20.05.2010թ. N257 որոշմամբ հաստատված՝ ապրանքների հայտարարագրի լրացման կարգի 15-րդ կետի 42-րդ ենթակետում՝ միջազգային պայմանագրերով և ակտերով ապրանքների հայտարարագրի

գրանցումից հետո ապրանքի ծագման երկրի հավաստագրերի բնօրինակների ներկայացման հնարավորություն նախատեսված լինելու դեպքում մաքսային հայտարարագրում համապատասխան նշում կատարելու վերաբերյալ:

3. Փաստաթուղթ

«Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 20-ի N378 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշում

Ամսաթիվը և համարը

26.11.2025թ. N108

Հրապարակումը

28.11.2025թ.

Ուժի մեջ է

28.12.2025թ.

Հղում

<https://docs.eaeunion.org/>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել են մաքսային հայտարարագրում հայտարարագրվող առանձին տեղեկությունների մասով համապատասխան դասակարգիչներ:

4. Փաստաթուղթ

«Սերբիայի Հանրապետության ծագում ունեցող և Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ ներմուծվող առանձին տեսակի ապրանքների նկատմամբ 2026-2028 թվականների համար սակագնային քվոտաներ սահմանելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշում

Ամսաթիվը և համարը

26.11.2025թ. N109

Հրապարակումը

28.11.2025թ.

Ուժի մեջ է

28.12.2025թ.

Հղում

<https://docs.eaeunion.org/>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել են «Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Սերբիայի Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» 25.10.2019թ. համաձայնագրի շրջանակներում «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ձևակերպվող որոշ ապրանքների նկատմամբ 2026-2028 թվականների համար սակագնային քվոտաները՝ նույն որոշման 1-3-րդ հավելվածներին համապատասխան:

5. Փաստաթուղթ

«Իրանի Իսլամական Հանրապետության ծագում ունեցող և Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ ներմուծվող առանձին տեսակի ապրանքների նկատմամբ 2026-2027 թվականների համար սակագնային քվոտաներ սահմանելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշում

Ամսաթիվը և համարը

26.11.2025թ. N110

Հրապարակումը

28.11.2025թ.

Ուժի մեջ է

28.12.2025թ.

Հղում

<https://docs.eaeunion.org/>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել են «Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Իրանի Իսլամական Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» 25.12.2023թ. համաձայնագրի շրջանակներում «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ձևակերպվող որոշ ապրանքների նկատմամբ 2026-2028 թվականների համար սակագնային քվոտաները՝ նույն որոշման 1-2-րդ հավելվածներին համապատասխան:

6. Փաստաթուղթ

«Ընկույզների որոշ տեսակների, սերմերի և պտուղների կորիզների նկատմամբ Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի ներմուծման մաքսատուրքի դրույքաչափեր սահմանելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշում

Ամսաթիվը և համարը

02.12.2025թ. N113

Հրապարակումը

05.12.2025թ.

Ուժի մեջ է

Ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից 30 օր հետո, սակայն ոչ շուտ՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի համապատասխան որոշման ուժի մեջ մտնելու ամսաթվից

Հղում

<https://docs.eaeunion.org/>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է ԱՏԳ ԱԱ 1207 99 960 1 և 1212 99 950 1 ծածկագրերին դասվող ապրանքների նկատմամբ 0 տոկոս ներմուծման մաքսատուրքի դրույքաչափ՝ որոշման ուժի մեջ մտնելու ամսաթվից մինչև 31.12.2028թ. ներառյալ:

7. Փաստաթուղթ

«Ապրանքների հայտարարագրի լրացման կարգում փոփոխություններ կատարելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշում

Ամսաթիվը և համարը

16.12.2025թ. N125

Հրապարակումը

19.12.2025թ.

Ուժի մեջ է

18.01.2026թ.

Հղում

<https://docs.eaeunion.org/>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ փոփոխություն է կատարվել Մաքսային միության հանձնաժողովի 20.05.2010թ. N257 որոշմամբ հաստատված՝ ապրանքների հայտարարագրի լրացման կարգում՝ առևտրային փաստաթղթերում պարունակվող տեղեկությունների հայտարարագրման մասով:

8. Փաստաթուղթ

«Կաշվի և կոշիկի արտադրության մեջ օգտագործման համար նախատեսված առանձին ապրանքների նկատմամբ Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկում և Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնում փոփոխություններ կատարելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշում

Ամսաթիվը և համարը

24.12.2025թ. N137

Հրապարակումը

26.12.2025թ.

Ուժի մեջ է

Ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից 30 օր հետո, սակայն ոչ շուտ՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի համապատասխան որոշման ուժի մեջ մտնելու ամսաթվից

Հղում

<https://docs.eaeunion.org/>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկում հստակեցվել են առանձին ապրանքների ԱՏԳ ԱԱ ծածկագրերը և դրանց նկարագրությունները, սահմանվել են ներմուծման մաքսատուրքի միասնական դրույքաչափեր:

9. Փաստաթուղթ

«Թանկարժեք մետաղների թափոնների և ջարդոնի նկատմամբ Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի ներմուծման մաքսատուրքի դրույքաչափեր սահմանելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշում

Ամսաթիվը և համարը

24.12.2025թ. N138

Հրապարակումը 26.12.2025թ.
Ուժի մեջ է 25.01.2026թ.
Հղում <https://docs.eaeunion.org/>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ ԱՏԳ ԱԱ 7112 30 000 0, 7112 91 000 0, 7112 92 000 0, 7112 99 000 0 ծածկագրերին դասվող ապրանքների նկատմամբ սահմանվել է 0 տոկոս ներմուծման մաքսատուրքի դրույքաչափ՝ որոշման ուժի մեջ մտնելու ամսաթվից մինչև 31.12.2028թ. ներառյալ:

10. Փաստաթուղթ «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 13.12.2017թ. N170 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշում
Ամսաթիվը և համարը 24.12.2025թ. N139
Հրապարակումը 26.12.2025թ.
Ուժի մեջ է 01.07.2026թ.
Հղում <https://docs.eaeunion.org/>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ լրացում է կատարվել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 13.12.2017թ. «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի կիրառման որոշ հարցերի մասին» N170 որոշման մեջ, և հաստատվել է «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների նկատմամբ ապրանքների փոխադրման երթուղու սահմանման, դրա փոփոխության և պահպանման հետ կապված մաքսային գործառնությունների իրականացման կարգը:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի որոշումներ

1. Փաստաթուղթ	«Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 19.05.2022թ. N85 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի որոշում
Ամսաթիվը և համարը	26.11.2025թ. N91
Հրապարակումը	26.11.2025թ.
Ուժի մեջ է	01.01.2026թ.
Հղում	https://docs.eaeunion.org/

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է, որ «Եվրասիական տնտեսական միության մասին» 29.05.2014թ. պայմանագրի 37-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված դեպքում սակագնային առանձնաշնորհումների կիրառման նպատակով 2026 թվականի հունվարի 1-ից մինչև 2029 թվականի դեկտեմբերի 31-ը ապրանքների ծագումը հաստատելու նպատակով կարող է ներկայացվել ծագման հավաստագրի էլեկտրոնային կամ թղթային պատճենը՝ պայմանով, որ ապրանքների հայտարարագրի գրանցումից հետո 6 ամսվա ընթացքում կներկայացվի ծագման հավաստագրի բնօրինակը:

2. Փաստաթուղթ	«Էլեկտրական շարժիչով առանձին տեսակների շարժիչային տրանսպորտային միջոցներին առնչվող՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի և Մաքսային միության հանձնաժողովի առանձին որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի որոշում
Ամսաթիվը և համարը	05.12.2025թ. N111
Հրապարակումը	24.12.2025թ.
Ուժի մեջ է	22.01.2026թ.
Հղում	https://docs.eaeunion.org/

Համառոտ նկարագիր

Որոշմամբ ԱՏԳ ԱԱ 8703 80 000 3 և 8703 80 000 5 ծածկագրերին դասվող էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների ներմուծման համար Հայաստանի Հանրապետությանը 2026 թվականի համար հատկացվել է 15000 հատի չափով քվոտա, որի շրջանակներում նշված տրանսպորտային միջոցների ներմուծումն ազատվում է ներմուծման մաքսատուրքի վճարումից:

3. Փաստաթուղթ

Ամսաթիվը և համարը

Հրապարակումը

Ուժի մեջ է

Հղում

«Էլեկտրոնային առևտրի ապրանքների հետ կապված առանձին հարցերի մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի որոշում

05.12.2025թ. N112

29.12.2025թ.

Պաշտոնական հրապարակումից 10 օրացուցային օր հետո, բայց 25.12.2023թ. ստորագրված՝ «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 11.04.2017թ. պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության ուժի մեջ մտնելու ամսաթվից ոչ շուտ

<https://docs.eaeunion.org/>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ ֆիզիկական անձանց կողմից ձեռքբերված էլեկտրոնային առևտրի ապրանքների՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծման համար սահմանվել է մաքսատուրքի միասնական դրույքաչափեր և էլեկտրոնային առևտրի ապրանքների շարքին չդասվող ապրանքների ցանկը:

4. Փաստաթուղթ

Ամսաթիվը և համարը

Հրապարակումը

Ուժի մեջ է

Հղում

«Արժեքային նորմեր սահմանելու մասին, որոնց սահմաններում ֆիզիկական անձանց կողմից ձեռքբերված էլեկտրոնային առևտրի ապրանքները Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվում են առանց էլեկտրոնային առևտրի ապրանքների նկատմամբ մաքսատուրքի վճարման» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի որոշում

05.12.2025թ. N119

12.01.2026թ.

Պաշտոնական հրապարակումից 10 օրացուցային օր հետո, բայց 25.12.2023թ. ստորագրված՝ «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 11.04.2017թ. պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության ուժի մեջ մտնելու ամսաթվից ոչ շուտ

<https://docs.eaeunion.org/>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է 200 եվրոյի չափով արժեքային նորմ, որի սահմաններում ֆիզիկական անձանց կողմից ձեռքբերված էլեկտրոնային առևտրի ապրանքները Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվում են առանց էլեկտրոնային առևտրի ապրանքների նկատմամբ մաքսատուրքի վճարման: